«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՆԵՐՔԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏ

Ակտի համարը և անվանումը՝	*№ 109, ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ*
Ընդունող մարմինը՝	*Տնօրինություն*
Ընդունման ամսաթիվը և հիմքը՝	*21.11.2024թ. թիվ 66-Լ որոշում*
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝	*25.12.2024թ.*
Խմբագրության հերթական համարը՝	*10.0*
Կիրառող ստորաբաժանում(ներ)ը՝	*ՆԴ*
Վերանայման համար պատասխանատու ստորաբաժանում(ներ)ը՝	*ՆԴ*
Հրապարակայնությունը՝	☐ *հրապարակվող* ☒ *սահմանափակ* ☐ *գաղտնի*

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կանոնները (այսուհետ՝ «Կանոններ») սահմանում են «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ «Բանկ») Հաճախորդների կողմից Բանկ ներկայացված Արժեթղթերով գործարքների կնքման Պատվերների ընդունման, հաղորդման, ինչպես նաև Հաճախորդների հաշվին Արժեթղթերով գործարքների կատարման (այսուհետ՝ «Բրոքերային ծառայություններ») կարգն ու պայմանները:

1.2. Սույն Կանոններին համապատասխան Բանկը մատուցում է Բրոքերային ծառայություններ ՀՀ տարածքում, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված օտարերկրյա պետությունների ցանկում ընգրկված որևէ պետությունում հրապարակային առաջարկին (վաճառքին) և (կամ) առևտրին թույլատրված կամ ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գործող Կարգավորվող շուկաների ցանկում ընդգրկված որևէ Կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված, ինչպես նաև Հաճախորդի կողմից Բանկին ներկայացված Պատվերներում նշված այլ Արժեթղթերով:

1.3. Կանոնները հանդիսանում է հրապարակային փաստաթուղթ, որը սահմանում է Բրոքերային ծառայությունների մատուցման պայմանագրի (այսուհետ՝ «Պայմանագիր») պայմանները, որին կարող է ծանոթանալ ցանկացած շահագրգիռ անձ: Կանոնները ենթակա են հրապարակման Բանկի ինտերնետային կայքում հետևյալ հասցեով՝ http://www.armswissbank.am: Կանոնների հրապարակումը բոլոր շահագրգիռ անձանց կողմից պետք է դիտվի որպես Բանկի կողմից ցանկացած ֆիզիկական և իրավաբանական անձանց, ինչպես նաև արտասահմանյան երկրների օրենսդրության համաձայն իրավաբանական անձ չհանդիսացող սակայն այլ երկրների արժեթղթերի շուկաներում գործարքների կնքման թույլտվություն ունեցող այլ անձանց ուղղված՝ Կանոններով սահմանված կարգով Պայմանագրի կնքման հրապարակային առաջարկ (հրապարակային օֆերտա), ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 444 հոդվածի դրույթների համաձայն Պայմանագրին միանալու միջոցով:

1.4. Պայմանագրին միանալը (Կանոնների պայմանների ակցեպտավորումը) տեղի է ունենում համապատասխան դիմումի (այսուհետ՝ Դիմում) (Հավելված 7) ներկայացման միջոցով: Դիմումի ներկայացումը կնշանակի Հաճախորդի՝ Պայմանագրին միանալու անվերապահորեն համաձայնությունը, ընդ որում Կանոններով նախատեսված որոշակի ծառայությունների մատուցման իրավահարաբերությունները կողմերի միջև կարգավորվում են կախված Հաճախորդի կողմից Դիմումի մեջ իրականացված համապատասխան նշումներից:

1.5. Սույն Կանոնները մշակված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ և այլ իրավական ակտերի համապատասխան:

2. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԱՆԿԻ ՄԱՍԻՆ

2.1. Լրիվ անվանումը՝ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերություն:

2.2. Գտնվելու վայրը՝ ՀՀ, ք. Երևան 0010, Վ. Սարգսյան 10:

2.3. Պետական գրանցումը՝ 07.10.2004թ., պետական գրանցման վկայական՝ թիվ 0476, գրանցման համարը՝ 84:

2.4. Լիցենզիա՝ Բանկային գործունեության լիցենզիա թիվ 84:

3. ՀԱՄԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3.1. Սույն Կանոններում օգտագործված հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը.

3.1.1. **«Ազատ դրամական միջոցներ»** ԵԳ-ի և Ածանցյալ ֆինանսական գործիքների գծով Բանկի նկատմամբ ստանձնած/ստանձնվելիք այլ պարտավորությունների գծով վճարվելիք միջոցներից զատ՝ Հաճախորդի համապատասխան հաշվում չսառեցված դրամական միջոցներ:

3.1.2. **«Ածանցյալ ֆինանսական գործիք»** Ֆյուչերսային կամ օպցիոն պայմանագիր (ֆյուչերս, օպցիոն), որը ԱՀ կանոնների համաձայն թույլատրված է առևտրին Ածանցյալ ֆինանսական գործիքների շուկայում:

3.1.3. **«Ածանցյալ ֆինանսական գործիքների շուկա»** Ածանցյալ ֆինանսական գործիքների կանոնավոր (բորսայական) առևտուր կազմակերպող Կարգավորվող շուկա:

3.1.4. **«Առևտրային համակարգ» կամ «ԱՀ»** Արժեթղթերի և Ածանցյալ ֆինանսական գործիքների Կարգավորվող շուկա, ներառյալ իրավասու դեպոզիտարիաները և բորսաների /առևտրի կազմակերպիչների/ հաշվարկային համակարգերը, որտեղ Արժեթղթերով գործառնություններն իրականացվում են տվյալ առևտրային համակարգի կանոններով կամ այլ նորմատիվ ակտերով հստակ սահմանված ընթացակարգերով, որոնք ենթակա են պարտադիր կատարման տվյալ առևտրային համակարգի բոլոր մասնակիցների կողմից:

3.1.5. **«Անմիջապես բավարարել կամ հանել հանձնարարական»** Հաճախորդի կողմից Բանկ ներկայացվող Պատվերում նշված Հանձնարարական, որը նախատեսում է Պատվերի անմիջապես կատարում՝ Պատվերում նշված գնով և լրիվ քանակով՝ հակառակ դեպքում Պատվերը չընդգրկելով Հերթում:

3.1.6. **«Աշխատանքային օր»** Հայաստանի Հանրապետության իրավական ակտերով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից, ինչպես նաև յուրաքանչյուր շաբաթվա շաբաթ ու կիրակի օրերից բացի ցանկացած օրացուցային օր:

3.1.7. **«Առևտրային գործարք»** Բանկի կողմից, իր անունից և Հաճախորդի հաշվին կամ Հաճախորդի անունից և Հաճախորդի հաշվին իրականացվող, արժեթղթերի, և /կամ Ածանցյալ ֆինանսական գործիքների առք և վաճառքի գործարք(այդ թվում Օպցիոնի Իրականացում):

3.1.8. **«Առևտրային նստաշրջան»** Առևտրային օրվա ժամանակահատված, որի ընթացքում Էլեկտրոնային առևտրային համակարգով տվյալ Կարգավորվող շուկայիառևտրի կանոններով սահմանված կարգով իրականացվում են Արժեթղթերով գործարքներ:

3.1.9. **«Արժեթուղթ»** ՀՀ օրենսդրությամբ և գործարար շրջանառության սովորույթներով որպես արժեթուղթ սահմանվող ցանկացած գույքային իրավունք:

3.1.10. **«Բազիսային ակտիվ»** Ածանցյալ ֆինանսական գործիքի հիմքում ընկած ակտիվ:

3.1.11. **«Բավարարել լրիվ հանձնարարական»** Հաճախորդի կողմից Բանկ ներկայացվող Պատվերում նշված Հանձնարարական, որը նախատեսում է Պատվերի կատարում բացառապես Պատվերում նշված քանակով Արժեթղթերի գնման կամ վաճառքի պայմանով:

3.1.12. **«Բավարարել մասնակի հանձնարարական»** Հաճախորդի կողմից Բանկ ներկայացվող Պատվերում նշված Հանձնարարական, որը նախատեսում է Պատվերի կատարումը մասնակիորեն՝ մնացորդը Հերթում ընդգրկելու պայմանով:

3.1.13. **«Բաց դիրք»** Հաճախորդի ակտիվների և պարտավորությունների անհամապատասխանությունը, որն առաջանում է Ածանցյալ ֆինանսական գործիքներով կնքված գործարքների արդյունքում:

3.1.14. **«Բորսայական գործարք»** ֆոնդային բորսայի կանոններով սահմանված կարգով ֆոնդային բորսայում կնքված գործարք:

3.1.15. **«Բրոքեր»** Ներդրումային դեպարտամենտի աշխատակից, որը Պատվերների հիման վրա իրականացնում է Արժեթղթերի առք ու վաճառքի գործառնություններ:

3.1.16. **«Բրոքերային հաշիվ»** Բանկում բացված, ՀՀ դրամով և/կամ արտարժույթով արտահայտված Հաճախորդի դրամային հաշիվ, որը նախատեսված է Կանոններով ու Պայմանագրով նախատեսված և բրոքերային գործառնություններից բխող Հաճախորդի և Բանկի միջև փոխադարձ հաշվարկների իրականացման համար:

3.1.17. **«Գնման/վաճառքի լիմիտային հանձնարարական»** Հաճախորդի կողմից Բանկ ներկայացվող Պատվերում նշված Հանձնարարական, որը նախատեսում է Պատվերի կատարում՝ Պատվերում ֆիքսված գնից ոչ բարձր (ոչ ցածր) գնով Արժեթուղթ գնելու (վաճառելու) պայմանով:

3.1.18. **«Գնման/վաճառքի ստոպ հանձնարարական»** Հաճախորդի կողմից Բանկ ներկայացվող Պատվերում նշված Հանձնարարական, որը նախատեսում է Պատվերի կատարում (Արժեթղթերի առք/վաճառք)՝ Պատվերում նշված գնին բորսայում կամ բորսայից դուրս տվյալ Արժեթղթի գինը հասնելու դեպքում:

3.1.19. **«Գնման/վաճառքի ստոպ լիմիտային հանձնարարական»** Հաճախորդի կողմից Բանկ ներկայացվող Պատվերում նշված Հանձնարարական, որը միաժամանակ ներառում է Գնման (վաճառքի) լիմիտային հանձնարարականը մի գնով և Գնման (վաճառքի) ստոպ հանձնարարական մեկ այլ գնով.

3.1.20. **«Գործարքի կարգավորում»** Կնքված գործարքի գծով կողմերի իրավունքների և պարտավորությունների իրականացման գործընթաց, որը ներառում է Արժեթղթերի կամ Բազիսային ակտիվի ընդունում կամ մատակարարում, ձեռք բերված Արժեթղթերի կամ Բազիսային ակտիվի դիմաց վճարումների իրականացում կամ ստացում, ինչպես նաև բոլոր անհրաժեշտ ծախսերի փոխհատուցում (միջնորդավճարներ, փոխհատուցումներ, տույժեր և տուգանքներ և այլն):

3.1.21. **«Գործարքի վավերագիր»** գործարքը կնքող Բրոքերի կողմից կազմվող, գործարքի կնքումը հավաստող և Պատասխանատու աշխատակցին ու Սպասարկողին ներկայացվող փաստաթուղթ:

3.1.22. **Գործառնական օր.** Բանկի Աշխատանքային օրվա այն ժամանակահատվածն է, որի ընթացքում վերջինս իրականացնում է իր հաճախորդների սպասարկումը:

3.1.23. **«Դեպո հաշիվ»** Բանկում վարվող Արժեթղթերի հաշվառման համար նախատեսված գրառումների բազմություն, որը միավորված է ընդհանուր հատկանիշներով:

3.1.24. **«Դեպո հանձնարարական»** Ներդրողի կողմից Բանկ ներկայացվող և Արժեթղթերով հաշվարկային գործառնությունների իրականացման համար հիմք հանդիսացող փաստաթուղթ:

3.1.25. **«Դիրք»** Հաճախորդի դրամական միջոցների և Արժեթղթերի ամբողջություն, որի հաշվին տվյալ պահին հնարավոր է իրականացնել Գործարքների կարգավորում ԱՀ-ում կամ ԱՀ-ի խմբում (**Ընթացիկ դիրք**): Դիրքը վարվում է ԱՀ կամ ԱՀ խմբի (Դիրքը ԱՀ-ում), արժեթղթերի տեսակների (արժեթղթերի Դիրք), Ածանցյալ ֆինանսական գործիքների կամ դրամական միջոցների (դրամային Դիրք) կտրվածքով:

3.1.26. **«Դիրքի հարկադիր փակում»** Բանկի կողմից առանց համապատասխան Պատվերի ստացման, Հաճախորդի համապատասխան հաշվով Կանոններով սահմանված կարգով իրականացվող Առևտրային գործարք:

3.1.27. **«Երաշխիքային գումար»** կամ **«ԵԳ»** Հաճախորդի կողմից Բանկի նկատմամբ Ածանցյալ ֆինանսական գործիքներով իրականացված գործարքների գծով ստանձնած պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Բանկում բացված Ներդրումային հաշվին պարտադիր մուտքագրման ենթակա գումար:

3.1.28. **«Երաշխիքային միջոցներ»** Հաճախորդի կողմից Ածանցյալ ֆինանսական գործիքներով կնքված գործարքի արդյունքում առաջացող պարտավորությունների ապահովման նպատակով վերջինիս կողմից ներդրված դրամական միջոցները կամ արժեթղթերը:

3.1.29. **«Երկար դիրք»** Ածանցյալ ֆինանսական գործիքի գնման արդյունքում առաջացած իրավունքների և պարտավորությունների ամբողջություն:

3.1.30. **«Էլեկտրոնային առևտրային համակարգ»** հեռացված տերմինալի միջոցով ժամանակի իրական ռեժիմում Կարգավորվող շուկաների առևտրային համակարգերին հասանելիություն ապահովող ծրագրային մոդուլ:

3.1.31. **«Կարգավորվող շուկա»** հանրության համար ուղղակիորեն կամ անուղղակիորեն մատչելի կազմակերպական, իրավական և տեխնիկական միջոցների համակարգ է, որը կանոնավոր կերպով Արժեթղթերի առքի և վաճառքի առաջարկների հանդիպման վայր կամ միջոց է կազմակերպում, տրամադրում, ապահովում կամ իրականացնում է Արժեթղթերով առևտրի կազմակերպման սովորաբար իրականացվող գործառույթներ: Կարգավորվող շուկան ներառում է ֆոնդային բորսան և այլ կարգավորվող շուկաները:

3.1.32. **«Կարճ դիրք»** Ածանցյալ ֆինանսական գործիքի վաճառքի արդյունքում առաջացած իրավունքների և պարտավորությունների ամբողջություն:

3.1.33. **«Հաճախորդ»** ֆիզիկական, իրավաբանական անձ կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպություն, որը Բանկ է դիմել և ցանկանում է կնքել Պայմանագիր:

3.1.34. **«Հաճախորդների սպասարկման դեպարտամենտ»** կամ **«ՀՍԴ»** Հաճախորդների սպասարկումն իրականացնող Բանկի կառուցվածքային ստորաբաժանում, որն իրականացնում է Բրոքերային ծառայությունների շրջանակներում Հաճախորդների սպասարկումը և վերջիններիս Պատվերների հիման վրա իրականացված գործարքների հաշվառումը և վերջնահաշվարկը:

3.1.35. **«Հանել մնացորդը հանձնարարական»** Հաճախորդի կողմից Բանկ ներկայացվող Պատվերում նշված Հանձնարարական, որը նախատեսում է Պատվերի անմիջապես

կատարում Պատվերում նշված Արժեթղթի քանակի հնարավոր առավելագույն չափով՝ մնացորդը Հերթում չընդգրկելու պայմանով:

3.1.36. **«Հանձնարարական»** Պատվերում նշվող տեղեկությունների համախումբ, որը ներառում է Պատվերի հիման վրա գործարքի կնքման համար անհրաժեշտ գնային, ծավալային և ժամանակային պայմանները:

3.1.37. **«ՀՀՆՀ դեպարտամենտ»** Բանկի կառուցվածքային ստորաբաժանում, որն իրականացնում է Բրոքերային ծառայությունների շրջանակներում կնքված գործարքների հաշվապահական հաշվառումը:

3.1.38. **«Հերթ»** Բոլոր Հաճախորդների կողմից Բանկ ներկայացված, բայց դեռևս չկատարված Պատվերների հաջորդականություն: Հաճախորդների Պատվերները կատարվում են ըստ դրանց ստացման հերթականության՝ ելնելով պատվերի տեսակից և շուկայի իրավիճակից:

3.1.39. **«Ներդրումային հաշիվ»** Հաճախորդի կողմից Բանկ ներկայացված դիմումի հիման վրա Բանկի կողմից համապատասխան ԱՀ պահանջների համաձայն Ածանցյալ ֆինանսական գործիքներով գործարքներ կնքելու նպատակով բացվող ենթահաշիվ:

3.1.40. **«Ներդրումային դեպարտամենտ»** Բանկի կառուցվածքային ստորաբաժանում, որը Հաճախորդներին մատուցում է Բրոքերային ծառայություններ արժեթղթերի շուկաներում, սկսած Հաճախորդների կողմից Բանկին ներկայացված Պատվերների ընդունումից մինչև այդ Պատվերների հիման վրա գործարքների փաստացի կնքումն ու համապատասխան հաշվետվությունների ներկայացումը:

3.1.41. **«Շուկայական հանձնարարական»** Հաճախորդի կողմից Բանկ ներկայացվող Պատվերում նշված Հանձնարարական, որը նախատեսում է Պատվերի կատարում՝ տվյալ պահին շուկայում գոյություն ունեցող լավագույն գնով անմիջապես Արժեթուղթ գնելու կամ վաճառելու պայմանով: Այն դեպքում, երբ Առևտրային նստաշրջանի որոշակի պահի դրությամբ շուկայում առկա է գնանշումների էական (10%) սփրեդ (գնման և վաճառքի լավագույն գների տարբերությունը), Բանկն իրավասու է, եթե վերջինիս հիմնավոր կարծիքով դա բխում է Հաճախորդի շահերից, հետաձգել Հաճախորդի կողմից ներկայացված Շուկայական հանձնարարականի/ների կատարումը մինչև 30 (երեսուն) րոպե ժամանակով, եթե կատարման այլ պայման նշված չէ Հաճախորդի կողմից ներկայացված Պատվերում:

3.1.42. **«Չկարգավորվող շուկա»** Կարգավորվող շուկայից դուրս Արժեթղթերով օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով կատարվող գործարքների ամբողջություն:

3.1.43. **«Պատասխանատու աշխատակից»** Ներդրումային դեպարտամենտի աշխատակից, որը Պատվերների հիման վրա կատարված գործարքների գծով Հաճախորդներին ներկայացնում է հաշվետվություններ:

3.1.44. **«Պարգևավճար»** Օպցիոն գնորդի հաշվից Օպցիոն վաճառողի հաշվին փոխանցման ենթակա գումար, որը վճարվում է Օպցիոնի կնքման դեպքում, եթե այլ բան սահմանված չէ Օպցիոնի բնութագրով:

3.1.45. **«Պայմանագիր»** Բրոքերային ծառայություններից օգտվելու համար Բանկին դիմած անձի և Բանկի միջև կնքված փաստաթուղթ, որում սահմանվում են տվյալ անձի Արժեթղթերով և/կամ դրամական միջոցներով գործարքների կնքման, կատարման, ծառայությունների դիմաց վճարման, հաշվետվողականության և դրանց հետ կապված կողմերի իրավահարաբերությունները:

3.1.46. **«Պայմանագրի իրականացում»** կամ **«Իրականացում»** Ածանցյալ ֆինանսական գործիքի բնութագրով և ԱՀ կանոններով սահմանված կարգով պայմանագրի կողմերի ստանձնած իրավունքների և պարտավորությունների դադարման գործընթաց:

3.1.47. **«Պատվեր»** Հաճախորդի կողմից Բանկին տրվող և Հաճախորդի Արժեթղթերով և/կամ դրամական միջոցներով Բանկի կողմից գործարքի կնքման համար հիմք հանդիսացող փաստաթուղթ:

3.1.48. **«Պահել հերթում մինչև բավարարումը հանձնարարական»** Հաճախորդի կողմից Բանկ ներկայացվող Պատվերում նշված Հանձնարարական, որը նախատեսում է, որ Պատվերը կարող է մնալ Հերթում՝ մինչև Պատվերում նշված լրիվ քանակով Արժեթղթերի գնումը կամ վաճառքը.

3.1.49. **«Պլանային դիրք»** Հաճախորդի ընթացիկ Դիրքն է նվազեցված ակտիվ Պատվերների (Հաճախորդի կողմից Բանկ ներկայացված, բայց վերջինիս կողմից դեռևս չիրականացված), ինչպես նաև դրամական միջոցների դուրսգրման և դեպո հանձնարարականների ընդհանուր գումարի չափով:

3.1.50. **«Ռիսկերի կառավարման դեպարտամենտ»** Ռիսկերի կառավարման համար պատասխանատու՝ Բանկի կառուցվածքային ստորաբաժանում:

3.1.51. **«Սահմանափակող մարժա»** Հաճախորդների համար սահմանվող Փաստացի մարժայի մակարդակ: Բանկը չի իրականացնում Հաճախորդի Պատվերներով այնպիսի գործարքներ, որոնց արդյունքում Փաստացի մարժայի մեծությունը կնվազի Սահմանափակող մարժայի մեծությունից:

3.1.52. **«Սպասարկող»** Հաճախորդների սպասարկման դեպարտամենտի աշխատակից,

3.1.53. **«Փաստացի մարժա»** Բանկի կողմից օգտագործվող հաշվարկային ցուցանիշ, որը նպատակ է հետապնդում գնահատել կնքված գործարքների արդյունքում Հաճախորդի՝ Բանկի նկատմամբ ունեցած պարտավորությունների կատարման ունակությունը: Փաստացի մարժան հաշվարվում է հետևյալ բանաձևով՝

$$ՓՄ = \frac{ՀԴՄ + ԱԸԳ - ՀՊՄ}{ՀԴՄ + ԱԸԳ} \times 100\%$$

որտեղ՝

ՀԴՄ-ն Բանկի հատուկ բրոքերային հաշիվներում վարվող ինչպես նաև նախկինում կնքված գործարքների արդյունքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ Առևտրային նստաշրջանի ավարտն ակնկալվող Հաճախորդի դրամական միջոցներն են՝ հանած կնքված գործարքներից բխող պարտավորությունների կատարման համար Հաճախորդի դրամային հաշվից մինչև տվյալ Առևտրային նստաշրջանի ավարտը վճարվելիք դրամական միջոցները,

ԱԸԳ-ն Բանկի կողմից Հաճախորդի պարտավորությունների դիմաց ընդունման ենթակա վերջինիս դեպո հաշվում հաշվառվող կամ տվյալ Առևտրային նստաշրջանի ավարտից ոչ ուշ վերոնշյալ հաշիվ մուտքագրման ենթակա արժեթղթերի ընթացիկ շուկայական վաճառքի (bid) գինն է՝ հանած նախկինում կնքված գործարքների արդյունքում Հաճախորդի դեպո հաշվից մինչև տվյալ Առևտրային նստաշրջանի ավարտը ելքագրման ենթակա արժեթղթերի ընթացիկ շուկայական վաճառքի (bid) գինը,

ՀՊՄ-ն Բանկի հանդեպ ստանձնած՝ Հաճախորդի պարտավորությունների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցներն են, որոնց հաշվարկը պետք է իրականացվի տվյալ Առևտրային նստաշրջանի ընթացքում:

Փաստացի մարժայի հաշվարկի մեջ ընդգրկվում են տվյալ պահի դրությամբ կնքված բոլոր գործարքները, այդ թվում՝ այն գործարքները, որոնց գծով հաշվարկները պետք է իրականացվեն տվյալ Առևտրային նստաշրջանի ընթացքում:

3.1.54. **«Փոխառություն»** Օտարերկրյա արժեթղթերով մարժինալ գործարքների իրականացման նպատակով Բանկի կողմից Հաճախորդին տրամադրած փոխառու միջոցներ:

3.1.55. **«Փոխառու միջոցների օգտագործման վճար»** Տրամադրած փոխառության դիմաց գանձվող վճար, որը հաշվարկվում է Բրոքերային ծառայությունների մատուցման սակագներով սահմանված տարեկան տոկոսադրույքով:

3.1.56. **«Փոփոխվող(վարիացիոն) մարժա»** Առևտրային նստաշրջանի արդյունքներով Ածանցյալ ֆինանսական գործիքներով ունեցած Բաց դիրքերի գծով Հաճախորդի հաշվից դուրս գրման կամ մուտքագրման ենթակա գումար: Վերջինիս հաշվարկման մեխանիզմը սահմանվում է Առևտրային համակարգի կանոններով և/կամ տվյալ Ածանցյալ ֆինանսական գործիքի բնութագրով: Փոփոխվող(վարիացիոն) մարժայից զատ, ռիսկերի կառավարման նպատակով, Բանկը հաշվարկում է Փոփոխվող մարժայի ընթացիկ մեծությունը, ելնելով Ածանցյալ ֆինանսական գործիքների ընթացիկ շուկայական գներից:

3.1.57. **«Քլիրինգ»** Առևտրային նստաշրջանի ժամանակահատված, որի ընթացքում տվյալ Կարգավորվող շուկայի կանոններով սահմանված կարգով իրականացվում է Երաշխիքային գումարի ընթացիկ արժեքի գնահատում Հաճախորդի Բաց դիրքերի գծով և Վարիացիոն մարժայի մուտքագրում/ելքագրում Հաճախորդի հաշվին/հաշվից:

3.1.58. **«Ֆյուչերսային պայմանագիր» (Ֆյուչերս)** Ածանցյալ ֆինանսական գործիք, որն իրենից ներկայացնում է ստանդարտացված պայմաններով կնքվող Բազիսային ակտիվի առք ու վաճառքի պայմանագիր, որը ենթադրում է պարտավորությունների կատարումը ապագայում Առևտրային համակարգի կանոններով և տվյալ ֆյուչերսի բնութագրով սահմանված ժամկետների և պայմանների համաձայն:

3.1.59. **«Օպցիոն պայմանագիր (Օպցիոն)»** Ածանցյալ ֆինանսական գործիք է, որի գնորդը իրավունք է ստանում (առանց պարտավորության) նախապես սահմանված պայմաններով և ժամկետներում օպցիոն վաճառողից գնել կամ նրան վաճառել օպցիոնի հիմքում ընկած ակտիվը, իսկ օպցիոն վաճառողը ստանձնում է պարտավորություն գնորդի պահանջի դեպքում նախապես սահմանված պայմաններով և ժամկետներում գնել կամ նրան վաճառել օպցիոնի հիմքում ընկած ակտիվը:

3.1.60. **«Օպցիոնի/Ֆյուչերսի մարում»** ԱՀ կանոններով և բնութագրով սահմանված կարգով Օպցիոնի/Ֆյուչերսի Իրականացում:

4. ՀԱՃԱԽՈՐԴԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1. Բանկը, ի դեմս Պատասխանատու աշխատակցի, մինչև Պայմանագիր կնքելը, Հաճախորդին է ներկայացնում հետևյալ տեղեկությունները՝

- Բանկի և վերջինիս կողմից առաջարկվող բրոքերային ծառայությունների մասին,
- Արժեթղթերի տեսակների և հնարավոր ռիսկերի մասին,
- Բրոքերային ծառայությունների մատուցման ընթացքում առաջացող ծախսերի (ներառյալ հարկերը) և միջնորդավճարների մասին:

– ՀՀ օրենսդրությամբ (իրավական ակտերով) նախատեսված այլ տեղեկություններ:

5. ՀԱՃԱԽՈՐԴԻՑ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԸ ԵՎ ԴՐԱ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՁԵՎԸ

5.1. Բանկը, ի դեմս Պատասխանատու աշխատակցի, նախքան Հաճախորդի հետ Պայմանագրի կնքումը, Հաճախորդից պահանջում է տեղեկություններ վերջինիս՝ Բրոքերային ծառայությունների և Արժեթղթերի վերաբերյալ գիտելիքների ու փորձի մասին (Հավելված 1):

5.2. Այն դեպքում, երբ Պատասխանատու աշխատակիցը Հաճախորդի կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա գտնում է, որ տվյալ ծառայությունը կամ Արժեթուղթը չեն համապատասխանում Հաճախորդի պահանջներին, ապա նա զգուշացնում է Հաճախորդին այդ մասին:

5.3. Այն դեպքում, երբ Հաճախորդը չի տրամադրում Կանոնների 5.1. կետում նշված տեղեկատվությունը, կամ տրամադրում է ոչ բավարար տեղեկատվություն, ապա Պատասխանատու աշխատակիցը զգուշացնում է Հաճախորդին այն մասին, որ վերջինիս վարքագիծը թույլ չի տալիս գնահատել, թե արդյոք տվյալ ծառայությունը կամ Արժեթուղթը համապատասխանում է Հաճախորդի պահանջներին:

5.4. Պատասխանատու աշխատակիցը Հաճախորդի կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա համաձայն ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգի դասակարգում է վերջինիս որպես պրոֆեսիոնալ կամ ոչ պրոֆեսիոնալ Հաճախորդ, ընդ որում Հաճախորդը տալիս է իր գրավոր համաձայնությունը դասակարգման արդյունքների վերաբերյալ, եթե վերջինս համաձայն է դասակարգման արդյունքների հետ:

6. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՀԱՇԻՎՆԵՐԻ ԲԱՑՈՒՄԸ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ

6.1. Սույն Կանոնների 5.1. կետում նախատեսված տեղեկությունները Հաճախորդի կողմից ստանալուց հետո Պատասխանատու աշխատակիցն առաջարկում է Հաճախորդին Բանկում բացել բրոքերային (ՀՀ դրամով և/կամ արտարժույթով) և դեպո հաշիվներ՝ Բանկի համապատասխան ներքին ընթացակարգերով սահմանված կարգով:

6.2. Հաշիվներ բացելու վերաբերյալ Հաճախորդի համաձայնությունը ստանալուց հետո սույն Կանոնների 6.1. կետի համաձայն Սպասարկողը Հաճախորդի անունով բացում է բրոքերային և դեպո հաշիվներ, որից հետո կազմակերպում է Հաճախորդի և Բանկի միջև Պայմանագրի կնքումը: Վերջինիս ուժի մեջ մտնելու պահից Հաճախորդն իրավունք է ստանում Բանկում բացված իր բրոքերային և դեպո հաշիվներին փոխանցել դրամական միջոցներ և/կամ Արժեթղթեր, ինչպես նաև Կանոններով սահմանված կարգով Բանկ ներկայացնել Պատվերներ:

6.3. Բանկի հետ Պայմանագիր կնքելիս իրավաբանական անձ Հաճախորդը Սպասարկողին է ներկայացնում նաև իրավաբակական անձի անունից Պատվերներ ներկայացնելու իրավասություն ունեցող անձանց ցուցակը, նրանց ստորագրությունների նմուշները և անձնագրերի պատճենները, որոնցից մեկական կրկնօրինակ տրամադրվում է Պատասխանատու աշխատակցին:

6.4. Բանկի հետ Պայմանագիր կնքելիս 6.1 և 6.2 կետերում նշված հաշվի բացման վերաբերյալ դրույթները պարտադիր չեն, եթե Պայմանագիրը կնքվում է ՀՀ շուկայում կնքվող մեկ անգամյա գործարքի կնքման համար: Սույն կետում նշված դեպքերում Պայմանագիրը կարող է կնքվել առանց հաճախորդի համար դրամային և/կամ դեպո հաշիվների բացման՝

ՀՍԴ համապատասխան ենթակառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի ներկայացմամբ և ՀՍԴ ղեկավարի թույլտվությամբ:

7. ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ՀԱՇՎԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄՈՒՏՔԱԳՐՄԱՆ ԵՎ ԵԼՔԱԳՐՄԱՆ ԿԱՐԳԸ

7.1. Բրոքերային հաշվին դրամական միջոցների մուտքագրումը, այդ թվում՝ Փոխառության տրամադրումը և այդ հաշվից դրամական միջոցների ելքագրումն իրականացվում է Բանկի կողմից սահմանված ներքին ընթացակարգերի համաձայն՝ Ներդրումային դեպարտամենտի ղեկավարի կամ նրա տեղակալի հաստատմամբ:

7.2. Բանկի կողմից բրոքերային հաշվից դրամական միջոցների ելքագրումն իրականացվում է այն դեպքում, երբ բրոքերային հաշվի մնացորդը միաժամանակ բավարարում է դրամական միջոցների ելքի օրդերի և Հաճախորդի կողմից նախկինում կնքված գործարքների գծով առաջացած պարտավորությունների, Բանկի կամ երրորդ անձանց օգտին վճարման ենթակա միջնորդավճարներից, տոկոսագումարներից, տույժերից և տուգանքներից բխող պարտավորությունների ամբողջական կատարմանը, որից հետո փաստացի մարժայի մեծությունը չի նվազում սահմանափակող մարժայի մեծությունից:

8. ԲԱՆԿ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՏՎԵՐԻ ՁԵՎԸ ԵՎ ԴՐԱ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

8.1. Հաճախորդի կողմից Բանկ ներկայացվող Պատվերը ներառում է Հավելված 2-ում և/կամ Հավելված 2*-ում ներկայացված տեղեկությունները:

8.2. Պայմանագրով կարող են նախատեսվել այլ տեղեկություններ՝ սահմանված Բանկի և Հաճախորդի փոխադարձ համաձայնությամբ:

8.3. Հաճախորդի Արժեթղթերով և/կամ դրամական միջոցներով գործարքների կնքման համար հիմք է հանդիսանում Հաճախորդի կողմից սույն Կանոնների Հավելված 2-ին և/կամ 2*-ին համապատասխան լրացված և թղթային կամ էլեկտրոնային եղանակով (ֆաքսիմիլային կապով կամ էլեկտրոնային փոստով) Սպասարկողին, ինչպես նաև Կանոնների անբաժանելի մաս հանդիսացող «Կապի միջոցներով հաղորդագրությունների փոխանակման» ընթացակարգի համաձայն Բրոքերին ներկայացված Պատվերը: Պատվերը Բանկ (Սպասարկողին/Բրոքերին) ներկայացված է համարվում, եթե այն ներկայացվել է Հաճախորդի կողմից անձամբ կամ նրա լիազոր ներկայացուցչի կողմից, կամ ներկայացվել է Բանկ (Բրոքերին) համաձայն Կանոնների անբաժանելի մաս հանդիսացող «Կապի միջոցներով հաղորդագրությունների փոխանակման» ընթացակարգի, կամ Բանկի հետ փոխհամաձայնեցված կապի այլ միջոցներով:

8.4. Հաճախորդի կողմից ներկայացված Պատվեր է համարվում նաև էլեկտրոնային առևտրային համակարգ Հաճախորդի կողմից ներմուծված այն Պատվերը, որի գծով գործարք է կնքվում այդ համակարգում:

8.5. Թղթային եղանակով Պատվերը ներկայացնելու դեպքում Սպասարկողը ստուգում է Պատվերը ներկայացնող անձի լիազորությունները:

8.6. Հաճախորդի կողմից թղթային ձևով Պատվերը Սպասարկողին ներկայացվում է 2 օրինակից, ընդ որում մեկ օրինակը մնում է Սպասարկողի մոտ, իսկ մյուս օրինակը դրոշմակնքված և Սպասարկողի ստորագրությամբ վերադարձվում է Հաճախորդին:

8.7. Հաճախորդի կողմից էլեկտրոնային եղանակով Պատվեր ներկայացնելու դեպքում, Սպասարկողը Հաճախորդին ուղարկում է Պատվերի ընդունման կամ մերժման մասին համապատասխան էլեկտրոնային հաղորդագրություն:

8.8. Էլեկտրոնային առևտրային համակարգ Հաճախորդի կողմից Պատվերի ներմուծման և/կամ Բրոքերի կողմից հեռախոսով Հաճախորդից պատվերների ընդունման դեպքում, Պատասխանատու աշխատակիցը յուրաքանչյուր օրվա համար մինչև հաջորդ աշխատանքային օրվա ավարտը կազմում է Հաճախորդից ընդունված Պատվերների հավաքական ամփոփագիր (Հավելված 2-1 և Հավելված 2-1*), որը ստորագրվում է Բրոքերի և Ներդրումային Դեպարտամենտի տնօրենի կամ վերջինիս տեղակալի կողմից և լուսապատճենը ուղարկվում է Սպասարկողին:

8.9. Հաճախորդի կողմից Պատվերի թղթային տարբերակի ներկայացման պահ է համարվում Սպասարկողի կողմից այն ընդունելու պահը: Պատվերը Բանկի կողմից ընդունված է համարվում Սպասարկողի կողմից այն ընդունելու մասին նշում կատարելու պահից, էլեկտրոնային եղանակով ուղարկված Պատվերի դեպքում՝ դրա ընդունման վերաբերյալ համապատասխան էլեկտրոնային հաղորդագրության ուղարկման պահից, իսկ էլեկտրոնային առևտրային համակարգ Պատվեր ներմուծելու դեպքում՝ այդ Պատվերի ներմուծման էլեկտրոնային առևտրային համակարգի կողմից ֆիքսված պահը:

8.10. Բանկն իրավունք ունի մերժել Հաճախորդի Պատվերի ընդունումը հետևյալ դեպքերում.

8.10.1. Հաճախորդի (նրա լիազոր ներկայացուցչի) անձը հաստատող փաստաթղթի անհամապատասխանության կասկածի դեպքում,

8.10.2. Սույն Կանոնների Հավելված 2-ով սահմանված ձևից շեղումներով կամ ջնջումներով ներկայացված Պատվերի դեպքում,

8.10.3. եթե Հաճախորդի դրամական միջոցները կամ Արժեթղթերը, որոնց նկատմամբ տրվել է Պատվերը, ծանրաբեռնված են այլ անձանց իրավունքներով կամ կալանքի տակ են գտնվում (արգելադրված են),

8.10.4. եթե Հաճախորդի բրոքերային/Ներդրումային կամ դեպո հաշվում բացակայում են համապատասխան դրամական միջոցները (ներառյալ գործարքի կնքման համար անհրաժեշտ միջնորդավճարները, ԵԳ-ի և Վարիացիոն մարժայի ընթացիկ արժեքը ծածկելու համար անհրաժեշտ միջոցները) և/կամ Արժեթղթերը (բացառությամբ մարժինալ գործարքների),

8.10.5. եթե Բանկին հասանելիք վարձատրությունը (այդ թվում Էլեկտրոնային առևտրային համակարգով գործարքներ իրականացնելու համար Հաճախորդին տրամադրված հեռացված տերմինալի համար գանձվող ամսական սպասարկման վճարները) Հաճախորդի կողմից չի ապահովվել (չի վճարվել): Տվյալ դեպքում Բանկն իրավունք ունի միակողմանի և անակցեպտ կարգով դադարեցնել Հաճախորդին ծառայությունների մատուցումը,

8.10.6. եթե Հաճախորդի կողմից ներկայացված Պատվերով գործարքի կատարումը հակասում է Հաճախորդի ներդրումային փորձին և նպատակներին,

8.10.7. Պատվերում նշված պայմանների՝ ՀՀ օրենսդրությանն ու Կանոններին անհամապատասխանության դեպքում:

8.11. Ածանցյալ ֆինանսական գործիքների շուկայում Հաճախորդներին Օպցիոնների վաճառքի (բացառությամբ Օպցիոններով դիրքի փակման) հնարավորությունը Բանկն ընձեռում է իր հայեցողությամբ, հիմք ընդունելով հետևյալ չափանիշները՝

8.11.1. Ածանցյալ ֆինանսական գործիքների շուկայում 3 (երեք) ամսից ոչ պակաս փորձ.

8.11.2. Ածանցյալ ֆինանսական գործիքների շուկայում վերոնշյալ ժամկետում Դիրքի հարկադիր փակման ինչպես նաև Օպցիոնների վաճառքի հնարավորությունը Բանկի կողմից ընձեռման քննարկման ժամանակ Ներդրումային հաշվով պարտավորությունների բացակայություն:

8.11.3. Բանկի կողմից սահմանվող այլ չափանիշներ:

Բանկի կողմից Օպցիոնի գծով Դիրքի հարկադիր փակման պարագայում, Բանկն իրավասու է դադարեցնել Հաճախորդին ընձեռված Օպցիոնների վաճառքի հնարավորությունը:

Հաճախորդը կարող է հետ կանչել ներկայացված Պատվերը կամ դրանում՝ ըստ Հանձնարարականի գնային, քանակական կամ ժամանակային պայմանների փոփոխություններ կատարել, եթե տվյալ Պատվերով գործարք դեռևս չի կնքվել Բանկի կողմից:

8.12. Նախկինում թղթային կամ էլեկտրոնային եղանակով ներկայացված Պատվերի փոփոխությունն իրականացվում է Հաճախորդի կողմից Բանկ ներկայացվող համապատասխան նոր Պատվերի (Հավելված 2-2(*) (Այսուհետ՝ Պատվեր 1(*)) հիման վրա: Հեռախոսով ընդունված Պատվերի փոփոխությունն իրականացվում է հեռախոսով, ինչպես նաև թղթային կամ էլեկտրոնային եղանակով այդպիսի փոփոխություն իրականացնելու համար սահմանված ընթացակարգով: Էլեկտրոնային առևտրային համակարգ ներմուծված Պատվերի փոփոխությունն իրականացվում է այդ համակարգում առկա Պատվերի խմբագրման միջոցով: Ընդ որում Պատվերների հաշվառման նպատակով որպես ներկայացված Պատվեր ընդունվում է տվյալ Պատվերի վերջին խմբագրված տարբերակը, բացառությամբ թղթային կամ էլեկտրոնային եղանակով ներկայացված Պատվերի փոփոխության:

8.13. Նախկինում թղթային կամ էլեկտրոնային եղանակով ներկայացված Պատվերի հետկանչումն իրականացվում է Հաճախորդի կողմից Բանկ ներկայացվող Դիմումի (Հավելված 2-3) հիման վրա: Հեռախոսով ընդունված Պատվերի հետկանչումն իրականացվում է հեռախոսով, ինչպես նաև թղթային կամ էլեկտրոնային եղանակով հետկանչում իրականացնելու համար սահմանված ընթացակարգով: Էլեկտրոնային առևտրային համակարգ ներմուծված Պատվերի հետկանչումն իրականացվում է այդ համակարգում առկա Պատվերի հանման (չեղյալ ճանաչման) միջոցով: Ընդ որում Պատվերների հաշվառման նպատակով հեռախոսով հետկանչված կամ համակարգից հանված Պատվերները չեն դիտարկվում:

8.14. Սպասարկողը Պատվեր 1(*)-ը կամ Դիմումն ընդունելուց առաջ պարտավոր է Բրոքերից ճշտել, թե արդյոք տվյալ Պատվերի գծով գործարքներ իրականացվել են, թե՝ ոչ:

8.15. Բանկն իրավունք ունի հրաժարվել Հաճախորդի Պատվերը կատարելուց այն դեպքում, երբ Պատվերի կատարումը հնարավոր չէ՝ կապված շուկայական իրավիճակների, գործարար շրջանառության սովորույթների և այլ օբյեկտիվ հանգամանքների հետ:

8.16. Պատվերը կատարելուց հրաժարվելու դեպքում Բանկն այդ մասին անհապաղ տեղեկացնում է Հաճախորդին՝ վերջինիս Պատվերը կատարելուց հրաժարվելու վերաբերյալ համապատասխան հաղորդագրություն կամ ծանուցում ուղարկելու միջոցով:

8.17. Հաճախորդն իրավունք ունի Պայմանագրի գործողության ընթացքում փոփոխել սույն Կանոնների Հավելված 1-ի համաձայն ներկայացված տեղեկությունները:

9. ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՎ ԳՐԱՆՑՄԱՆ ԿԱՐԳԸ

9.1. Սպասարկողը, Հաճախորդի կողմից ներկայացված Պատվերի, Պատվեր 1(*)-ի կամ Դիմումի ընդունումից հետո, Բրոքերին է փոխանցում վերջիններիս լուսապատճենները:

9.2. Սպասարկողից ստանալով Հաճախորդի կողմից ներկայացված Պատվերի, Պատվեր 1(*)-ի կամ Դիմումի պատճենները՝ Բրոքերը այդ Պատվերների էական պայմանները մուտքագրում է Պատվերների հաշվառման էլեկտրոնային գրանցամատյանում:

9.3. Հաճախորդից հեռախոսով Պատվեր ընդունելու, Հաճախորդի կողմից էլեկտրոնային առևտրային համակարգ Պատվեր ներմուծվելու դեպքում, ինչպես նաև հեռախոսով կամ էլեկտրոնային առևտրի համակարգով Պատվերները փոփոխելու կամ հետկանչելու դեպքում Բրոքերը այդ Պատվերների էական պայմանները մուտքագրում է Պատվերների հաշվառման էլեկտրոնային գրանցամատյանում՝ այդ մասին բանավոր տեղյակ պահելով Սպասարկողին:

9.4. Պատվերների հաշվառման էլեկտրոնային գրանացամատյանը պարունակում է հետևյալ տեղեկատվությունը՝

9.4.1. Հաճախորդի կողմից տրված պատվերի համարը,

9.4.2. Հաճախորդի անունը, ազգանունը (անվանումը) կամ Հաճախորդին նույնականացնող համարը,

9.4.3. Հաճախորդի կողմից տրված Պատվերում նշված գործարքի տեսակը (առք, վաճառք),

9.4.4. Հաճախորդի կողմից տրված պատվերի բնույթը (բաժանորդագրություն, օպցիոնի իրականացում և այլն)

9.4.5. Հաճախորդի կողմից տրված պատվերի տեսակը (շուկայական, լիմիտային և այլն),

9.4.6. Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը (բացակայության դեպքում՝ թողարկողի անվանումը և Արժեթղթի տեսակը, իսկ ածանցյալ գործիքի դեպքում՝ դրա նկարագիրը),

9.4.7. Արժեթղթերի քանակը,

9.4.8. միավորի գինը,

9.4.9. ընդհանուր ծավալը,

9.4.10. Հաճախորդի կողմից տրված առանձնահատուկ ցուցումները (առկայության դեպքում),

9.4.11. Հաճախորդի կողմից տրված պատվերի ստացման ճշգրիտ ժամանակը՝ հաջորդաբար նշելով տարին, ամիսը,օրը, ժամը և րոպեն.

9.4.12. Պատվերը գրանցող շահագրգիռ անձի անունը, ազգանունը:

9.5. Հեռախոսով ընդունված կամ էլեկտրոնային առևտրային համակարգ ներմուծված Պատվերների (ներառյալ մարժինալ և ածանցյալ ֆինանսական գործիքներով գործարքների դեպքում) էական պայմանների հիման վրա Պատասխանատու աշխատակիցը կազմում է Պատվերների հավաքական ամփոփագիր որը ստորագրվում է Բրոքերի և Ներդրումային դեպարտամենտի տնօրենի կամ վերջինիս տեղակալի կողմից և լուսապատճենը տրամադրվում է ***Սպասարկողին*** :

9.6. Բանկի կողմից գործարքները կնքվում են.

9.6.1. Կարգավորվող շուկայում՝ Բանկի կողմից տվյալ Կարգավորվող շուկայում կազմակերպվող առևտրի ընթացքում Արժեթղթի գնման/վաճառքի առաջարկ ներկայացնելու միջոցով.

9.6.2. Չկարգավորվող շուկայում՝ Բանկի կողմից արժեթղթի գնման/վաճառքի առաջարկ ներկայացնելու միջոցով:

9.7. Կարգավորվող շուկայում Բանկի կողմից գործարքները կնքվում և կատարվում են տվյալ կարգավորվող շուկայի կողմից սահմանված կանոններին համապատասխան:

9.8. Չկարգավորվող շուկայում գործարքները Բանկի կողմից կատարվում են Արժեթղթերի շուկան կարգավորող ՀՀ և այն երկրի օրենսդրության համաձայն, որտեղ կնքվում է այդ գործարքը:

9.9. Հաճախորդների կողմից ներկայացված Պատվերների հիման վրա Բրոքերի կողմից կնքված գործարքների էական պայմանները մուտքագրում է Գործարքների հաշվառման էլեկտրոնային գրանցամատյանում, որը պարունակում է հետևյալ տեղեկատվությունը՝

9.9.1. Գործարքի վավերագրի համարը

9.9.2. Հաճախորդի անունը, ազգանունը (անվանումը) կամ Հաճախորդին նույնականացնող համարը,

9.9.3. Գործարքի կնքման ամսաթիվը՝ հաջորդաբար նշելով տարին, ամիսը և օրը,

9.9.4. Գործարքի կնքման ժամը՝ հաջորդաբար նշելով ժամը և րոպեն.

9.9.5. Գործարքի կատարման ամսաթիվը՝ հաջորդաբար նշելով տարին, ամիսը և օրը,

9.9.6. Գործարքի տեսակը (առք, վաճառք),

9.9.7. Բնույթը, եթե պատվերում նշված գործարքի տեսակը առք կամ վաճառք չէ (բաժանորդագրություն, օպցիոնի իրականացում և այլն)

9.9.8. Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը (բացակայության դեպքում՝ թողարկողի և արժեթղթի անվանումը, իսկ ածանցյալ գործիքի դեպքում՝ դրա նկարագիրը),

9.9.9. Արժեթղթերի քանակը,

9.9.10. միավորի գինը,

9.9.11. ընդհանուր ծավալը,

9.9.12. Գործարքի մյուս կողմը,

9.9.13. Գործարքի կնքման վայրը (նշվում է ֆոնդային բորսայի անվանումը, այլ կարգավորվող շուկայի անվանումը կամ «չկարգավորվող շուկա»),

9.9.14. Գործարքը կատարող շահագրգիռ անձի անունը, ազգանունը:

9.10. Հաճախորդի Պատվերները կատարելու համար Բանկն իրավունք ունի Պատվերի կատարումը փոխանցել այլ ներդրումային ծառայություններ մատուցող անձի, ինչպես նաև օգտվել միջազգային և տեղական շուկաներում այլ կազմակերպությունների կողմից տրամադրվող էլեկտրոնային առևտրային համակարգերից:

9.11. Հաճախորդների կողմից ներկայացված Պատվերների հիման վրա Բրոքերին ներկայացված Հայտերը ենթակա են առաջնահերթ կատարման Բանկի սեփական հայտերի նկատմամբ:

9.12. Թույլատրվում է Պատվերում նշված Հանձնարարականի կատարումը մաս առ մաս, եթե Պատվերով այլ բան նախատեսված չէ:

9.13. Լիմիտային պատվերները Բանկի կողմից կատարվում են կախված շուկայի ընթացիկ իրավիճակից:

9.14. Բանկն իրավունք ունի կատարել լիմիտային պատվերն ավելի շահավետ պայմաններով, քան նշված է Պատվերում: Այդ դեպքում Հաճախորդի նշած գնի և կատարման գնի տարբերության կեսը հանդիսանում է լրացուցիչ պարգևավճար Բանկի համար, որը գանձվում է Բանկի կողմից, Հաճախորդի՝ Բանկում բացված ընթացիկ դրամային հաշվից:

9.15. Հաճախորդի Պատվերի համար հնարավորինս լավագույն պայմաններով կատարման կարգը սահմանված է Բանկի «Պատվերների կատարման քաղաքականությամբ», որին կարելի է ծանոթանալ Բանկի ինտերնետային կայք էջերում՝ http://www.armswissbank.am և http://invest.armswissbank.am հասցեներով:

10. ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐՈՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

10.1. Էլեկտրոնային առևտրային համակարգով գործարքներ իրականացնելու համար Հաճախորդը Բանկ է ներկայացնում ազատ ոճով գրված դիմում, որը քննարկվում է Բանկի կողմից այն ներկայացնելուց հետո 3 բանկային օրվա ընթացքում: Դրական որոշման դեպքում Էլեկտրոնային առևտրային համակարգը երկու բանկային օրվա ընթացքում տեղադրվում է Հաճախորդի համակարգչում:

10.2. Էլեկտրոնային առևտրային համակարգը տրամադրվում է հեռացված տերմինալի տեսքով:

10.3. Էլեկտրոնային առևտրային համակարգերում գործարքներ իրականացնելու համար Հաճախորդներին տերմինալ տրամադրելուց Բանկն առաջնորդվում է հետևյալ օբյեկտիվ չափանիշներով.

10.3.1. Հաճախորդը պետք է ունենա Բանկի հետ բրոքերային ծառայությունների գործող պայմանագիր,

10.3.2. Բանկի կարծիքով ներդրումային գործունեության բնագավառում Հաճախորդի գիտելիքներն ու փորձը բավարար են, և նման ծառայությունը համապատասխանում է Հաճախորդի պահանջներին:

10.4. Բանկն իրավունք ունի Հաճախորդին չտրամադրել Էլեկտրոնային առևտրային համակարգի տերմինալը, եթե չեն բավարարվում 10.3 կետում նշված պահանջներից և ոչ մեկը:

10.5. Էլեկտրոնային առևտրային համակարգին միանալու համար Հաճախորդի համակարգիչը պետք է համապատասխանի հետևյալ տեխնիկական նվազագույն պահանջներին.

10.5.1. Pentium 4 կամ դրան համարժեք, 2 Ghz կամ ավելի հզոր պրոցեսոր,

10.5.2. 1 Gb-ից ոչ պակաս օպերատիվ հիշողություն (խորհուրդ է տրվում 4 Gb),

10.5.3. բոլոր ծրագրերի տեղադրումից հետո կոշտ սկավառակի վրա 2 Gb-ից ոչ պակաս ազատ տարածություն,

10.5.4. Windows 2000/2003/XP/Vista/Windows 7/ Windows 8 օպերացիոն համակարգ,

10.5.5. սկավառակակրի կամ տվյալների այլ կրիչի առկայություն,

10.5.6. ինտերնետ հասանելիություն:

10.6. Էլեկտրոնային առևտրային համակարգին միանալու համար Հաճախորդի համակարգիչը սպասարկող ինտերնետ կապուղին պետք է համապատասխանի հետևյալ պահանջներին.

10.6.1. TCP/IP տվյալների հաղորդման պրոտոկոլ,

10.6.2. կապի գծի թողունակություն ոչ պակաս 14.4 կբիտ/վրկ-ից,

10.6.3. դեպի համակարգի սերվեր ազդանշանի (ping) անցման ժամանակը՝ 0.5-0.7 վայրկյանից ոչ ավելի,

10.6.4. տվյալների փաթեթի կորստի տոկոսը ոչ ավելի, քան 2%:

10.7. Բանկն իրավունք ունի Հաճախորդին չտրամադրել Էլեկտրոնային առևտրային համակարգի տերմինալ, եթե չեն բավարարվում 10.5. և 10.6. կետերի պահանջները:

11. ՄԱՐԺԻՆԱԼ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

11.1. Մարժինալ գործարքներ իրականացնելու համար Հաճախորդը Բանկի հետ լրացուցիչ կնքում է Օտարերկրյա արժեթղթերով մարժինալ գուծարքների կնքման համաձայնագիր:

11.2. Բանկը Հաճախորդի հետ կնքում է սույն Կանոնների 11.1 կետում նշված համաձայնագիրը, եթե Բանկի կարծիքով ներդրումային գործունեության բնագավառում Հաճա-

խորդի գիտելիքներն ու փորձը բավարար են, և նման ծառայությունը համապատասխանում է Հաճախորդի պահանջներին:

11.3. Մարժինալ գործարքները կնքվում են սույն Կանոններով սահմանված կարգով Հաճախորդի կողմից Էլեկտրոնային առևտրային համակարգ ներմուծված կամ հեռախոսով Բրոքերին հաղորդված Պատվերի հիման վրա:

11.4. Հաճախորդի կողմից Էլեկտրոնային առևտրային համակարգ ներմուծված կամ հեռախոսով Բրոքերին հաղորդված Պատվերը համարվում է Մարժինալ գործարքի կնքման Պատվեր, եթե Պատվերի հիման վրա կնքվելիք գործարքի ծավալը գերազանցում է Հաճախորդի Պլանային դիրքի մեծությունը:

11.5. Եթե կնքված գործարքի գծով վերջնահաշվարկի իրականացման ժամանակ Հաճախորդի Բրոքերային հաշվում առկա դրամական միջոցները չեն բավարարում բրոքերային գործարքներից բխող պարտավորությունների ամբողջական կատարմանը, ապա Հաճախորդի մոտ առաջանում է դրամական միջոցների գծով պարտավորություն Բանկի նկատմամբ այն արժույթով, որով արտահայտված են Հաճախորդի կողմից գնված արժեթղթերը: Հաճախորդի մոտ Բանկի նկատմամբ պարտավորություն կարող է առաջանալ հետևյալ դեպքերում՝

11.5.1. Հաճախորդի կողմից կնքված մարժինալ գործարքների վերջնահաշվարկի ժամանակ, եթե մինչ այդ Հաճախորդը չի համալրել իր Բրոքերային հաշիվը,

11.5.2. եթե, Բանկից անկախ որևէ պատճառով, Բրոքերային գործարքի վերջնահաշվարկի օրը չի հաշվառվել Հաճախորդի կողմից կնքված Բրոքերային գործարքը, որի արդյունքում Հաճախորդի Բրոքերային հաշվին մուտք չեն եղել Հաճախորդի պարտավորությունների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցները (բացառությամբ այն դեպքերի, երբ Հաճախորդը բրոքերային գործարքը կնքել է գործառնական օրվա ավարտից հետո, բայց նույն առևտրային նստաշրջանի ընթացքում, որի գծով փոխհաշվարկները Սպասարկողը իրականացնում է հաջորդող գործառնական օրվա ընթացքում),

11.5.3. եթե կնքված գործարքների գծով պարգևավճարների գանձման ժամանակ Հաճախորդի Բրոքերային հաշվում բացակայում են համապատասխան դրամական միջոցները:

11.6. Հաճախորդի մոտ դրամական միջոցների գծով պարտավորությունների առաջացման դեպքում Բանկը Հաճախորդին տրամադրում է Փոխառություն Հաճախորդի կողմից համապատասխան ապահովվածության տրամադրման պայմանով, որը սահմանվում է Բանկի և Հաճախորդի միջև կնքված Օտարերկրյա արժեթղթերով մարժինալ գործարքների կնքման համաձայնագրով:

11.7. Փոխառու միջոցների օգտագործման վճարի չափը սահմանվում է Բրոքերային ծառայությունների մատուցման սակագներով:

11.8. Սույն գլխի շրջանակներում Բանկի Հաճախորդներին (ներառյալ Բանկի աշխատակից հանդիսացող Հաճախորդներին) փոխառու միջոցների տրամադրումը ստանդարտ պայմաններով, ինչպես նաև Կանոնների 16-րդ գլխի համապատասխան, իրականացվում է հաշվի առնելով ՀՀ ԿԲ համապատասխան նորմատիվ իրավական ակտերով ամրագրված պահանջները:

11.9. Ներդրումային և Ռիսկերի կառավարման դեպարտամենտների կողմից համատեղ Բանկի Գործադիր տնօրենի անունով ներկայացվում է զեկուցագիր Հաճախորդին (ներառյալ Բանկի աշխատակից հանդիսացող Հաճախորդներին առանձին և/կամ բոլորին միասին) տրամադրման ենթակա փոխառության առավելագույն սահմանաչափը սահմանելու

վերաբերյալ: Գործադիր տնօրենի կողմից մակագրված զեկուցագիրը ներկայացվում է ՀՍԴ, որի հիման վրա տվյալ Հաճախորդին տրամադրվում է համապատասխան փոխառու միջոցների սահմանաչափ:

12. ԱԾԱՆՑՅԱԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐՈՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

12.1. Ածանցյալ ֆինանսական գործիքներով գործարքները կնքվում են սույն Կանոններով սահմանված կարգով Հաճախորդի կողմից Էլեկտրոնային առևտրային համակարգ ներմուծված կամ հեռախոսով Բրոքերին հաղորդված Պատվերի հիման վրա:

12.2. Բանկը Հաճախորդի կողմից Էլեկտրոնային առևտրային համակարգ ներմուծված կամ հեռախոսով Բրոքերին հաղորդված Պատվերի հիման վրա կնքում է Ածանցյալ ֆինանսական գործիքներով գործարքներ պայմանով, որ Հաճախորդի Ներդրումային հաշվին առկա են դրամական միջոցներ, որոնք անհրաժեշտ են և բավարար ԵԳ-ի, Վարիացիոն մարժայի ընթացիկ մակարդակի, միջնորդավճարների և տվյալ գործարքի կնքման հետ կապված այլ ծախսերի (ներառյալ հարկերի) փոխհատուցման համար:

12.3. Բանկը չի ընդունում ակտիվի իրական առաքմամբ Ածանցյալ ֆինանսական գործիքներով գործարքների կնքման Պատվեր, որոնց Բազիսային ակտիվ է հանդիսանում ապրանք /թանկարժեք մետաղներ, նավթամթերք և այլն/:

12.4. Մինչև Հաճախորդի կողմից ներկայացված Պատվերի ընդունումը և/կամ կատարումը Բանկն իրավունք ունի իրականացնել Հաճախորդի Դիրքերի նախնական գնահատում բոլոր ակտիվների գծով: Բանկի կողմից Հաճախորդի Դիրքերի կառավարման սեփական համակարգի օգտագործումը Բանկի համար չի առաջացնում որևէ պատասխանատվություն Հաճախորդի Պատվերի հիման վրա իրականացված գործարքի/ների գծով: Մինչև Պատվեր ներկայացնելը Հաճախորդը պարտավոր է ինքնուրույն, Բանկի կողմից ստացված տեղեկատվության հիման վրա, հաշվարկել Բանկ ներկայացվող յուրաքանչյուր Պատվերի առավելագույն ծավալը: Բանկը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի կողմից սեփական Դիրքերից ավել ծավալով կնքված գործարքի/ների արդյունքում առաջացող հնարավոր վնասների համար:

12.5. Բանկն իրավասու է միակողմանիորեն սահմանել լրացուցիչ պահանջներ Ածանցյալ ֆինանսական գործիքների գծով պարտավորությունների կատարման ապահովման համար (ԵԳ-ի լրացուցիչ մեծություն): Լրացուցիչ պահանջներ կարող են սահմանվել թե առանձին Հաճախորդների, թե գործիքների (պայմանագրերի) գծով: Լրացուցիչ պահանջի սահմանային մեծությունը չի կարող գերազանցել տվյալ ֆինանսական գործիքի համար ԱՀ-ի կողմից կամ տվյալ գործիքի բնութագրով սահմանված ԵԳ-ի 30 տոկոսը: ԵԳ-ի գծով լրացուցիչ պահանջի վերաբերյալ Բանկը տեղեկացնում է Հաճախորդին ԱՀ-ի կամ կապի այլ միջոցով, միաժամանակ իրականացնելով Բաց դիրքերի վերագնահատում: Վերագնահատման արդյունքում Դիրքի բացասական մեծության առաջացումը կնշանակի ԵԳ-ի գծով պարտավորության առաջացում:

12.6. Արդեն իսկ կնքված Գործարքների կարգավորումներն իրականացվում են համապատասխան ԱՀ-ի կանոններով սահմանված կարգով և ժամկետներում:

12.7. Եթե Հաճախորդի կողմից կնքված գործարքի գծով ԱՀ-ի կանոններով սահմանված կարգով վերջնահաշվարկի օր է սահմանվում T-րդ օրը, ապա վերջնահաշվարկի պահ կհամարվի տվյալ օրվա առևտրային նստաշրջանի փակմանը նախորդող առևտրային նստաշրջանի (T-1) փակման պահից առնվազն 30 րոպե առաջ ընկած պահը:

12.8. Եթե, մինչև 12.7. կետում նշված վերջնահաշվարկի պահը, Հաճախորդի Պլանային դիրքում բացակայում են անհրաժեշտ քանակությամբ արժեթղթեր և/կամ դրամական միջոցներ, Բանկն իրավասու է մասամբ կամ ամբողջությամբ դադարեցնել Հաճախորդի կողմից նախկինում ներկայացված պատվերների կատարումը, տվյալ գործարքի գծով վերջնահաշվարկն իրականացնելու նպատակով:

12.9. Եթե Քլիրինգային նստաշրջանի ավարտի արդյունքներով Հաճախորդի մոտ առաջանում է պարտավորություն ԵԳ-ի գծով, ապա վերջինս պարտավոր է մարել առաջացած պարտավորությունը հետևյալ ժամկետներում՝

12.9.1. ՖՈՐՏՍ ժամկետային շուկայում (Срочный рынок ФОРТС) - պարտավորության առաջացման Քլիրինգային նստաշրջանին հաջորդող Քլիրինգային նստաշրջանի սկսելուց առնվազն 2 ժամ առաջ,

12.9.2. Բոլոր այլ Ածանցյալ ֆինանսական գործիքների շուկաներում, որտեղ Բանկը Հաճախորդին մատուցում է տվյալ ծառայությունը - պարտավորության առաջացմանը հաջորդող աշխատանքային օրվա ժամը 10:00-ից ոչ ուշ:

12.10. Հաճախորդի, Ածանցյալ ֆինանսական գործիքների գծով պարտավորության չափը որոշելու նպատակով, ԵԳ-ի գծով պարտավորություն ասելով հասկացվում է՝ Հաճախորդի բոլոր Բաց դիրքերի գծով մուտքագրման ենթակա Երաշխիքային միջոցների, Օպցիոնների գծով վճարվելիք պարգևավճարների, Վարիացիոն մարժայի, այլ հնարավոր վճարների և Հաճախորդի Ներդրումային հաշվում հաշվառվող դրամական միջոցների տարբերության բացարձակ արժեքը:

12.11. Հաճախորդի կողմից 12.8. կետի պահանջները չկատարելու դեպքում Բանկն իրավասու է իրականացնել հետևյալ գործողությունները՝

12.11.1. Իրականացնում է Հաճախորդի չապահովված դիրքերի Հարկադիր փակում և/կամ.

12.11.2. սկսում է հաշվեգրել տուգանային տոկոսադրույք պարտավորության առաջացմանը հաջորդող 1-ին աշխատանքային օրվանից: Տուգանային տոկոսադրույքի չափը սահմանվում է Սակագներով:

12.12. Եթե Բանկի կողմից հաշվարկվող ԵԳ-ի գծով պարտավորության ընթացիկ մեծությունը գերազանցում է պահանջվող ԵԳ-ի մեծության 10% և/կամ ԵԳ-ի գծով պարտավորության չափը հավասարվում է 5,000 ԱՄՆ դոլարի (բացառությամբ ռուսական շուկաների/FORTS, MICEX/), Բանկն իրավասու է անհապաղ փակել Հաճախորդի չապահովված դիրքը/երը, ԵԳ-ի գծով ընթացիկ պարտավորության մարման նպատակով: Ընդ որում Բանկն իրավասու է սույն կետում նշված գործողությունն իրականացնել առանց Հաճախորդին նախօրոք տեղյակ պահելու, եթե Բանկի հիմնավոր կարծիքով շուկայական պայմանները/իրավիճակը կարող էին հանգեցնել Հաճախորդի համար ոչ բարենպաստ փոփոխությունների:

12.13. Բանկն իրավասու է փակել ԵԳ-ի լրացուցիչ մեծության գծով պարտավորության արդյունքում առաջացած չապահովված դիրքը/երը, այն դեպքում, եթե նախորդ առևտրային նստաշրջանում ևս առկա է եղել նման պարտավորություն:

12.14. Դիրքի Հարկադիր փակման ժամանակ, Բանկն ընտրում է փակման ենթակա Դիրքերն այն կերպ, որ փակվող Դիրքերի քանակը լինի նվազագույնը և բավարար ԵԳ-ի գծով պարտավորության ամբողջական մարման համար:

12.15. ԵԳ-ի գծով պարտավորության առաջացման դեպքում Բանկը տեղեկացնում է Հաճախորդին հետևյալ կերպ՝

12.15.1. Հեռախոսակապի միջոցով, ընդ որում Բանկի և Հաճախորդի միջև հեռախոսային խոսակցությունը ձայնագրվում է և հնարավոր վեճերի լուծման ժամանակ հանդիսանում է օրինական հիմք ունեցող ապացույց,

12.15.2. Էլեկտրոնային առևտրային համակարգի միջոցով արտացոլվող, Ածանցյալ ֆինանսական գործիքներով գործարքներ կնքելու համար նախատեսված Ազատ դրամական միջոցների բացասական մնացորդի արտացոլման միջոցով: Ընդ որում Հաճախորդը պարտավոր է ինքնուրույն վերահսկել նման պարտավորության առաջացումը և իրավունք չունի հիմնվել սույն կետում նշված տեղեկացման տեսակներից որևէ այլ տեսակի բացակայության վրա, պարտավորությունների չկատարման դեպքում:

12.15.3. Վարիացիոն մարժայի ընթացիկ բացասական մեծության դեպքում, Հաճախորդը պարտավոր է ինքնուրույն կառավարել ԵԳ-ի գծով ընթացիկ պարտավորությունը, ելնելով Վարիացիոն մարժայի ընթացիկ, ԵԳ-ի և Ազատ դրամական միջոցների մեծություններից:

12.16. Եթե Հաճախորդն ունի Ֆյուչերսով Բաց դիրք, որը նախատեսում է արժեթղթի իրական առաքում, ապա տվյալ պայմանագրի Իրականացման համար, Հաճախորդը տվյալ Ֆյուչերսի շրջանառության ժամկետի ավարտից առնվազն 1 աշխատանքային օր առաջ (ՌԴ ռուբլուց բացի այլ արժույթով կնքված գործարքների դեպքում 2 աշխատանքային օր) պարտավոր է իր համապատասխան հաշվին ապահովել պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ միջոցները:

12.17. Հաճախորդի կողմից 12.14. կետի դրույթների խախտումը Բանկի կողմից դիտարկվում է որպես պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարումից հրաժարում, ինչը Բանկին իրավունք է տալիս իրականացնել Դիրքի հարկադիր փակում (ամբողջությամբ կամ մասնակի), տվյալ պայմանագրի շրջանառության ժամկետի վերջին օրվան նախորդող Առևտրային նստաշրջանի ընթացքում:

12.18. Եթե Հաճախորդն ունի Բաց դիրք Օպցիոն պայմանագրի գծով, որի Բազիսային ակտիվ է հանդիսանում Ֆյուչերսային պայմանագիրը, ապա վերջինս, Օպցիոն պայմանագրի շրջանառության ժամկետի ավարտից առնվազն մեկ աշխատանքային օր առաջ պարտավոր է իր համապատասխան հաշվին ապահովել Օպցիոն պայմանագրի կատարման արդյունքում կնքվող Ֆյուչերսային պայմանագրի համար անհրաժեշտ և բավարար ԵԳ-ի և այլ միջնորդավճարների չափով դրամական միջոցներ և, եթե տվյալ Օպցիոնի բնութագրով և/կամ Կանոններով չի նախատեսվում վերջինիս ավտոմատ կատարում՝ համապատասխան ժամկետներում Բանկ ներկայացնել Օպցիոն գնորդի պահանջը հավաստող դիմում (Օպցիոնի մարման դիմում՝ Հավելված 6):

Բանկն իրավունք ունի Իրականացնել Օպցիոնն առանց Հաճախորդի կողմից Օպցիոնի մարման դիմումի ստացման, բայց չի երաշխավորում տվյալ Օպցիոնի պատշաճ կատարումը Օպցիոնի մարման դիմումը ժամանակին չստանալու դեպքում: Եթե Օպցիոնի բնութագրով նախատեսվում է վերջինիս Իրականացման հնարավորությունը և ցերեկային և վերջնական Քլիրինգային նստաշրջանի ժամանակ, և Հաճախորդի կողմից չի նշվել Իրականացման ժամը, ապա Բանկն իրավասու է ինքնուրույն որոշել տվյալ պայմանագրի Իրականացման ժամը:

12.19. Ակտիվի իրական առաքմամբ Ածանցյալ ֆինանսական գործիքների Մարումն իրականացվում է տվյալ գործիքի բնութագրով, ԱՀ և սույն Կանոններով նախատեսված կարգով: Եթե տվյալ գործիքի Իրականացման համար վերջինիս բնութագրով և/կամ ԱՀ կանոններով նախատեսված է լրացուցիչ պատվերի ստացում, ապա Բանկն Իրականացնում է

վերոնշյալ Ածանցյալ ֆինանսական գործիքը Հաճախորդի կողմից ստացված Պատվերի հիման վրա, որը Բանկի կողմից դիտարկվում է որպես Պատվերի տարատեսակ և ընդունվում է Կանոններով նախատեսված կարգով, հաշվի առնելով հետևյալ առանձնահատկությունները՝

12.19.1. Բանկի կողմից Ածանցյալ ֆինանսական գործիքների Իրականացման Պատվերների ընդումն ավարտվում է տվյալ ԱՀ-ի կողմից նշված պատվերների ընդունման վերջնաժամկետից 2 (երկու) աշխատանքային օր առաջ (բացառությամբ Ռուսական ռուբլով կնքված գործարքների):

12.19.2. Ռուսական ռուբլով կնքված Ածանցյալ ֆինանսական գործիքների Իրականացման Պատվերների ընդումն ավարտվում է տվյալ ԱՀ-ի կողմից նշված պատվերների ընդունման վերջնաժամկետից 1 (մեկ) աշխատանքային օր առաջ:

12.20. Բանկն իրավասու է Իրականացնել հաշվարկային Օպցիոնները առանց Հաճախորդի կողմից Օպցիոնի մարման դիմումի ստացման, եթե տվյալ Օպցիոնը գտնվում է 10% «դրամում», հաշվի առնելով Կանոններով նախատեսված սահմանափակումները: Օպցիոնը գտնվում է «Դրամում» եթե՝

12.20.1. Գնման Օպցիոնի դեպքում (Call-option)՝ Իրականացման գինը (Strike price) ցածր է տվյալ Օպցիոնի Բազիսային ակտիվի հաշվարկային գնից.

12.20.2. Վաճառքի Օպցիոնի դեպքում (Put-option)՝ Իրականացման գինը (Strike price) բարձր է տվյալ Օպցիոնի Բազիսային ակտիվի հաշվարկային գնից:

12.21. Հաճախորդի կողմից 12.17. կետի առաջին մասով սահմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Բանկն իրավասու է՝

12.21.1. չիրականացնել Օպցիոնի մարման դիմումը, /Օպցիոնի ավտոմատ Իրականացումը/.

12.21.2. Մասամբ Իրականացնել Օպցիոն պայմանագիրը: Ընդ որում, այս դեպքում Բանկն ինքնուրույն է ընտրում Իրականացման ենթակա Օպցիոնների ծավալը հիմք ընդունելով հետևյալը՝ Քլիրինգի արդյունքում գոյացող պարտավորությունը ԵԳ-ի գծով չպետք է գերազանցի պահանջվող ԵԳ-ի մեծության 20%: Այդ նպատակով Իրականացման ենթակա Օպցիոնների ծավալը որոշելիս, Բանկը հաշվարկում է ԵԳ պլանավորվող մեծությունը, հիմք ընդունելով ԵԳ բազային և Վարիացիոն մարժայի ընթացիկ մեծությունները.

12.21.3. Հաճախորդի՝ Բաց դիրքի հիմքում ընկած Օպցիոնի շրջանառության վերջին օրը, առանց Հաճախորդի կողմից Պատվերի ստացման, կնքել օֆսեթային գործարք տվյալ Օպցիոնի Բազիսային ակտիվ հանդիսացող Ֆյուչերսային պայմանագրով: Օֆսեթային գործարքի կնքումը կնշանակի Օպցիոնի մարման ժամանակ ԱՀ կողմից կնքվող Ֆյուչերսային գործարքին հակառակ գործարքի կնքում:

12.22. Բանկ իրավունք ունի չիրականացնել 12.19 կետի դրույթների չհամապատասխանող Օպցիոնները («Դրամում չգտնվող»):

12.23. Հաճախորդի կողմից Ածանցյալ ֆինանսական գործիքի իրականացումից հրաժարվելու դեպքում, Բանկն իրավասու է անակցեպտ կարգով գանձել բոլոր միջնորդավաճարները, համաձայն Սակագների:

13. ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ ԿՆՔԵԼՈՒ ՀԱՏՈՒԿ ԴԵՊՔԵՐԸ

13.1. Բանկն իրավասու է հատուկ կարգով, առանց Հաճախորդի կողմից համապատասխան Պատվերի ստացման, իր անունից և Հաճախորդի հաշվին և/կամ Հաճախորդի անունից և հաշվին ԱՀ-ում գործարքներ կնքել հետևյալ դեպքերում՝

13.1.1. Սույն Կանոնների 12.10 կետում նախատեսված դեպքերում:

13.1.2. Եթե Հաճախորդի համապատասխան հաշվին բացակայում է /բավարար չէ/ Ածանցյալ ֆինանսական գործիքի/ների գծով սույն Կանոններով սահմանված Բանկին վճարվելիք միջնորդավճարների և այլ վճարների չափով գումար: Այս դեպքում Բանկն իրավունք ունի իրացնել Հաճախորդին պատկանող Արժեթղթերը կամ փակել Ածանցյալ ֆինանսական գործիքով կնքված գործարքը/ները այն չափով, որն անհրաժեշտ է Բանկի նկատմամբ ստանձնված պարտավորությունների կատարման համար:

13.1.3. Հաճախորդի կողմից Ածանցյալ ֆինանսական գործիքի գծով Գործարքի կարգավորման համար անհրաժեշտ Պատվերի չստացման դեպքում:

13.2. Բրոքերային ծառայությունների մատուցման պայմանագրի գործողության դադարեցման կամ խզման դեպքում, Բանկը, դադարեցման կամ խզման օրն իրավունք ունի փակել Ածանցյալ ֆինանսական գործիքների գծով Հաճախորդի բոլոր Բաց դիրքերը և իրացնել Հաճախորդի հաշվում հաշվառվող ցանկացած գույք կամ գույքային իրավունք, այն ծավալով, որն անհրաժեշտ է Հաճախորդի բոլոր բաց Դիրքերը փակելու համար:

13.3. Սույն գլխի շրջանակներում իրականացված հարկադիր փակումը Բանկի կողմից դիտվում է որպես Բանկին տրամադրված Պատվեր և վերջինիս կատարման համար Հաճախորդից գանձվում է համապատասխան սակագին:

14. ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԳԾՈՎ ՓԱՍՏԱԹՂԹԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

14.1. Հաճախորդի Պատվերի հիման վրա գործարքը կնքելուց հետո Բրոքերի կողմից լրացվում է Գործարքի վավերագիրը (Հավելված 3), որը ստորագրվում է Բրոքերի և Ներդրումային դեպարտամենտի ղեկավարի կամ նրա տեղակալի կողմից:

14.2. Պատշաճ ձևով ստորագրված Գործարքի վավերագրի էլեկտրոնային լուսապատճենը էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկվում է Հաճախորդների սպասարկման և ՀՀևՀ դեպարտամենտներին ու Սպասարկողին՝ դրա ստացման փաստը հավաստող հաղորդագրություն ստանալու մասին նշումով: Գործարքի վավերագիրը սույն կետում նշված հասցեատերերին է ուղարկվում տվյալ Գործառնական օրվա ընթացքում, եթե գործարքը կնքվել է մինչև տվյալ Գործառնական օրվա ավարտը: Իսկ տվյալ Գործառնական օրվա ավարտից հետո կնքված Գործարքի վավերագիրը ուղարկվում մինչև տվյալ գործարքի կնքմանը հաջորդող Գործառնական օրվա ժամը 12:00: Գործարքի վավերագրի բնօրինակը մնում է Ներդրումային դեպարտամենտում և կարվում է օրվա գործերում:

14.3. Գործարքի վավերագիրը ստանալուց հետո նույն Գործառնական օրվա ընթացքում Սպասարկողը Հաճախորդի Բրոքերային հաշվից գանձում է կատարված գործարքի (գործարքների) գծով վճարման ենթակա միջնորդավճարները և ելքագրում/մուտքագրում/ է Բրոքերային գործարքով (գործարքներով) գնված/վաճառված/ արժեթղթերի համար անհրաժեշտ գումարները (եթե գործարքի կատարման օրը համընկնում է տվյալ Գործառնական օրվա հետ): Այն դեպքում, երբ Գործառնական օրվա ավարտին Հաճախորդի բրոքերային հաշվի մնացորդը չի բավականացնում նրա պարտավորությունների ամբողջական կատարմանը, ապա Սպասարկողը Հաճախորդին տրամադրում է Փոխառություն Բրոքերային գործարքի

արդյունքում Բանկի և երրորդ անձանց նկատմամբ առաջացած պարտավորությունների և Հաճախորդի սեփական միջոցների տարբերության չափով:

14.4. Բանկի կողմից տրամադրած Փոխառության դիմաց հաշվեգրված տոկոսագումարները (որի չափը սահմանվում է Բրոքերային ծառայությունների մատուցման սակագներով) մարվում են ամսական պարբերականությամբ, յուրաքանչյուր ամսվա 15-ին, ինչպես նաև փոխառության մարման օրը: Փոխառու միջոցների օգտագործման վճար հաշվեգրվում է միայն այն դեպքում, երբ միևնույն Առևտրային նստաշրջանի ընթացքում Հաճախորդի կողմից կնքված Բրոքերային գործարքների արդյունքում առաջացած պարտավորությունները գերազանցում են Հաճախորդի Բրոքերային հաշվի մնացորդը: Սպասարկողը փոխառու միջոցների օգտագործման վճար չի գանձում այն դեպքում, երբ Հաճախորդը բրոքերային գործարքներ է կնքել Գործառնական օրվա ավարտից հետո, բայց նույն Առևտրային նստաշրջանի ընթացքում, որոնց արդյունքում Հաճախորդի Բրոքերային հաշվին մուտք են եղել Հաճախորդի պարտավորությունների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցները:

14.5. Գործարքի վավերագրում նշված գործարքի կատարման օրը, Հաճախորդների սպասարկման ու ՀՀ և Հ դեպարտամենտներն իրականացնում են գործարքի գծով բոլոր հաշվարկները և կատարում են համապատասխան ձևակերպումներ:

14.6. Փոփոխվող մարժայի գծով Հաճախորդի հաշվի կարգավորումներն իրականացվում են Բանկի գործընկեր հանդիսացող կազմակերպությունից ստացված համապատասխան հաշվետվության հիման վրա:

14.7. 14.6 կետում նշված հաշվետվությունը ստանալուց հետո ՀՍԴ և ՀՀևՀ դեպարտամենտների իրավասու աշխատակիցները իրականացնում են համապատասխան հաշվապահական ձևակերպումներ (Հաճախորդի հաշվին մուտքագրվում կամ հաշվից ելքագրվում է Վարիացիոն մարժայի գումարը)

15. ՀԱՃԱԽՈՐԴԻՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՁԵՎԸ

15.1. Պատվերի հիման վրա կնքված գործարքի վավերագիրը Բրոքերից ստանալուց հետո Պատասխանատու աշխատակիցը մինչև գործարքի կնքման հաջորդ աշխատանքային օրվա ավարտը, /Ածանցյալ ֆինանսական գործիքներով իրականացված գործարքների դեպքում՝ մինչև հաջորդ առևտրային նստաշրջանի սկիզբը/ Հաճախորդի հետ համաձայնեցված կապի միջոցներով, գործարքի կնքման վերաբերյալ հաշվետություն է ներկայացնում Հաճախորդին (այսուհետ՝ Ընթացիկ հաշվետվություն) համաձայն Հավելված 4-ի և Հավելված 4*-ի:

15.2. Հաճախորդի կողմից համապատասխան պահանջի դեպքում, Պատասխանատու աշխատակիցը, յուրաքանչյուր ամսվա համար մինչև տվյալ ամսին հաջորդող ամսվա 15-ը, Հաճախորդի հետ համաձայնեցված կապի միջոցներով, Հաճախորդին տրամադրում է վերջինիս Պատվերների հիման վրա կատարված գործարքների վերաբերյալ հաշվետվություն համաձայն Հավելված 5-ի և Արժեթղթերով ու դրամական միջոցներով հաշիվների շարժի

վերաբերյալ հաշվետվություններ՝ քաղվածքներ դրամային և դեպո հաշիվներից (այսուհետ՝ Պարբերական հաշվետվություններ):

16. *ՀԱՃԱԽՈՐԴԻՆ ՌԻՍԿԻ ԲԱՐՁՐ ՄԱԿԱՐԴԱԿ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՑԱՆԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ԵՎ ԲԱՑԱՌԵԼՈՒ ԿԱՐԳԸ*

16.1. Սույն գլուխը կարգավորում է Մարժինալ գործարքների իրականացման շրջանակներում Հաճախորդին տրամադրվող փոխառության սահմանաչափի որոշման նպատակով Բանկի կողմից Հաճախորդին ռիսկի բարձր մակարդակ ունեցող Հաճախորդների ցանկում ընդգրկվելու գործընթացը:

16.2. Հաճախորդի ցանկությամբ, վերջինս Բանկի կողմից կարող է դասակարգվել որպես Ռիսկի բարձր մակարդակ ունեցող Հաճախորդ:

16.3. Ռիսկի բարձր մակարդակ ունեցող Հաճախորդ դասակարգվելու համար անհրաժեշտ է, որ Բանկի կողմից դասակարգման որոշման կայացմանը նախորդող վեց ամիսների ընթացքում Հաճախորդը Բանկի հետ ունենա արժեթղթերի շուկայում բրոքերային ծառայություններից օգտվելու առնվազն 6 (վեց) ամսվա փորձ, ընդ որում պարտադիր պայման է որոշման կայացմանն անմիջապես նախորդող երեք ամիսների ընթացքում Հաճախորդի կողմից Բանկի՝ արժեթղթերի շուկայում մատուցվող մարժինալ ծառայություններից օգտվելու հանգամանքը:

16.4. Ռիսկի բարձր մակարդակ ունեցող Հաճախորդ դասակարգելու համար Բանկ ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

16.4.1. Հաճախորդի կողմից Բանկ ներկայացված ազատ ոճով գրված դիմում

16.4.2. Եթե Հաճախորդն օգտվել է 16.2. կետի առաջին ենթակետում նշված ծառայություններից նշված ենթակետով ամրագրված ժամկետներից շեղումով ի վնաս Հաճախորդի, ապա վերջինս Բանկ է ներկայացնում /առկայության դեպքում/ այլ կազմակերպության հետ կնքված արժեթղթերի շուկայում բրոքերային ծառայությունների մատուցման պայմանագրի/երի, ինչպես նաև տվյալ կազմակերպության կողմից Հաճախորդին ներկայացված, վերջին 6 (վեց) ամսվա, 16.2. կետի առաջին ենթակետում նշված ծառայություններից օգտվելը հավաստող հաշվետվությունների բնօրինակը/ները:

16.5. Ռիսկի բարձր մակարդակ ունեցող Հաճախորդ դասակարգումից հանելու համար հիմքերն են՝

16.5.1. Հաճախորդի կողմից Բանկ ներկայացված ազատ ոճով գրված դիմումը.

16.5.2. Բրոքերային ծառայությունների մատուցման Պայմանագրի խզումը, դադարեցումը.

16.5.3. Պայմանագրով ստանձնված և Կանոններով ամրագրված պարտավորությունների ոչ պատշաճ կատարում.

16.5.4. Բանկի միանձնյա որոշումը:

16.6. Հաճախորդին ռիսկի բարձր մակարդակ ունեցող Հաճախորդ վերադասակարգելու որոշումն ընդունում է Բանկը միակողմանիորեն:

17. ՀԱՐԿՈՒՄ

17.1. ՀՀ օրենսդրությանը համաձայն՝ ռեզիդենտ իրավաբանական անձ հանդիսացող Հաճախորդները ՀՀ տարածքում ինքնուրույն են իրականացնում Արժեթղթերով գործարքների արդյունքում ծագած հարկային պարտավորությունների հաշվառումն ու վճարումը:

Բանկն Արժեթղթերի գործարքների վերաբերյալ բավարար տեղեկություն է տրամադրում Հաճախորդներին, որպեսզի վերջիններս հնարավորություն ունենան ինքնուրույն իրականացնել իրենց հարկային պարտավորությունների հաշվարկներն ու մուծումները:

17.2. Օրենսդրությամբ սահմանված դեպքերում Բանկն ինքն է իրականացնում ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձ և ոչ ռեզիդենտ իրավաբանական անձ Հաճախորդների հարկային պարտավորությունների հաշվառումն ու վճարումը՝ ՀՀ-ում և/կամ արտերկրում:

17.3. Հաճախորդները հատուցում են իրենց կողմից տրված պատվերների կատարման ժամանակ Բանկի կատարած ծախսերը և վճարած ու վճարվելիք բոլոր հարկերը:

18. ՏԵՂԵԿԱՑՈՒՄՆԵՐ ՀՆԱՐԱՎՈՐ ՌԻՍԿԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

18.1. <u>Արժեթղթերի շուկայում գործառնությունների իրականացման հետ կապված ռիսկեր.</u>

18.1.1. Բանկը տեղեկացնում է Հաճախորդին այն բանի մասին, որ Արժեթղթերում ցանկացած ներդրում իր բնույթով հանդիսանում է ռիսկային: Արժեթղթերի շուկայում գործարքներ կատարելիս ներդրողը առնչվում է հետևյալ ռիսկերի հետ.

18.1.1.1. **Ֆինանսական գործիքների գների փոփոխության ռիսկ**: Արժեթղթերի շուկայական գները և դրանց փոփոխությունները չեն գտնվում Բանկի հսկողության տակ: Նշված պատճառով Արժեթղթերում ներդրման դեպքում հնարավոր է նաև Հաճախորդի պորտֆելի արժեքի նվազում, ընդհուպ մինչև ամբողջ պորտֆելի կորուստը (մարժինալ գործարքների դեպքում հնարավոր կորուստները կարող են գերազանցել Հաճախորդի կողմից ներդրած սկզբնական գումարի մեծությունը):

18.1.1.2. **Իրացվելիության նվազման ռիսկ**: Այս ռիսկը կապված է տվյալ գործիքի նկատմամբ շուկայի այլ մասնակիցների հետաքրքրության նվազման հետ: Ֆինանսական գործիքի իրացվելիությունը կախված է թողարկողների կորպորատիվ գործողություններից, նրանց ֆինանսատնտեսական գործունեությունից, ընդհանուր շուկայի վիճակից, բորսաների և առևտրային հրապարակների ներքին կանոններից, որոնք կարող են բացասաբար անդրադառնալ տվյալ ֆինանսական գործիքի գնի, հետևաբար նաև Հաճախորդի պորտֆելի արժեքի վրա:

18.1.1.3. **Օրենսդրության փոփոխության ռիսկ**: Այս ռիսկը կապված է պետական իշխանության մարմինների և շուկաները կարգավորող այլ մարմինների գործողությունների հետ, որի հետևանքով Հաճախորդը կարող է կրել կորուստներ:

18.1.1.4. **Ենթակառուցվածքային ռիսկ**: Այս ռիսկը կապված է դեպոզիտարիաների, բորսաների, հաշվարկաքլիրինգային կազմակերպությունների աշխատանքների հետ, որոնց գործունեությունում ընդհատումները կարող են բերել Հաճախորդի ակտիվների (ինչպես դրամական միջոցների, այնպես էլ Արժեթղթերի) կորուստների:

18.1.1.5. **Էլեկտրոնային առևտրային համակարգերի օգտագործման հետ կապված ռիսկեր**: Այս ռիսկերը կապված են համակարգչային սարքավորումների, ծրագրային ապահովման անսարքության առաջացման, էլեկտրասնուցման, ինտերնետ փրովայդերների հետ կապված պրոբլեմների, կապի ընդհատումների և այլնի հետ, որոնք կարող են առաջ բերել Հաճախորդի ակտիվների կորուստներ:

18.1.1.6. **Այլ ռիսկեր**: Վերը թվարկված ռիսկերի ցանկը սպառիչ չէ: Ներդրումային գործունեությունը կարող է ուղեկցվել նաև այլ ռիսկերով:

18.2. **Տեղեկատվության էլեկտրոնային փոխանակման հետ կապված ռիսկեր.**

18.2.1. Հաճախորդը տեղեկացվում է այն մասին, որ ներդրումային գործունեությունը պարունակում է ռիսկեր՝ կապված մատուցվող ծառայությունների էլեկտրոնային բնույթի հետ, ինչպիսիք են, օրինակ, հուսալի կապի բացակայությունը, էլեկտրաէներգիայի անջատման հնարավորությունը, ծրագրային ապահովման աշխատանքի խաթարումը և այլն: Բանկը պատասխանատվություն չի կրում երրորդ անձանց գործունեության հետևանքով էլեկտրոնային առևտրի համակարգերի աշխատանքի ընդհատման համար: Բանկը նաև պատասխանատվություն չի կրում երրորդ անձանց գործունեության արդյունքում Բանկի և Հաճախորդի միջև փոխանցվող տեղեկատվության՝ երրորդ անձանց հասանելի դառնալու համար:

19. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՆՈՆՆԵՐՈՒՄ

19.1. Սույն Կանոններում փոփոխությունները և լրացումները կատարվում են Բանկի կողմից միակողմանիորեն:

19.2. Սույն Կանոններում փոփոխություններ (լրացումներ) կատարելու մասին տեղեկացումն իրականացվում է այդ փոփոխությունների (լրացումների) ուժի մտնելու պահից առնվազն 10 օր առաջ Հաճախորդի էլեկտրոնային /իրավասու/ փոստին ուղարկելու և Բանկի ինտերնետային կայք էջերում՝ http:/www.armswissbank.am և http:/invest.armswissbank.am տեղակայելու միջոցով, ընդ որում էլեկտրոնային տեղեկացման և կայք էջերում պարտադիր նշվում է նաև այդ փոփոխությունների ուժի մեջ մտնելու ամսաթիվը:

19.3. Կանոններում փոփոխություններին համաձայն չլինելու դեպքում Հաճախորդն իրավունք ունի մինչև դրանց ուժի մեջ մտնելը միակողմանիորեն խզել Պայմանագիրը, որի մասին Հաճախորդը գրավոր տեղեկացնում է Բանկին: Հաճախորդից ոչ մի առարկություն չունենալու դեպքում սույն Կանոններում Բանկի կողմից կատարված բոլոր փոփոխություններն ու լրացումները դրանց ուժի մեջ մտնելու պահից Հաճախորդի համար դառնում են պարտադիր:

19.4. Բանկի կողմից սույն Կանոններում կատարված բոլոր փոփոխությունները, որոնք կապված են գործող օրենսդրության, առևտրի կազմակերպիչների կանոնների և կանոնակարգերի փոփոխությունների հետ, ուժի մեջ են մտնում վերջիններիս ուժի մեջ մտնելուց հետո:

20. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

20.1. Սույն ակտով սահմանված դրույթների կատարման, խախտումների բացահայտման և առաջացած խնդիրների մասին զեկուցման, ինչպես նաև ակտի վերանայման համար պատասխանատու է Ներդրումային դեպարտամենտի ղեկավարը:

20.2. Բանկը պարտավոր է առնվազն 5 տարվա ընթացքում պահպանել Պայմանագիրը և դրա հիման վրա արժեթղթերով կատարված գործարքների վերաբերյալ բոլոր փաստաթղթերը և Հաճախորդի առաջին իսկ պահանջով նրան տրամադրել դրանց պատճենները՝ վավերացված Բանկի կնիքով և «իսկականի հետ ճիշտ է» նշագրմամբ: Նշված փաստաթղթերի պատճենահանման ծախսերը կրում է Հաճախորդը:

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ ԵՎ ՓՈՐՁԸ

1. **Ներդրումային ծառայությունների տեսակներ, որոնց հետ երբևէ առնչվել եք**.

☐ բրոքերային ծառայություններ
☐ պահառության ծառայություններ
☐ արժեթղթերի փաթեթի կառավարման ծառայություններ
☐ արժեթղթերով փոխառություն և վարկավորում
☐ այլ ծառայություններ

2. **Արժեթղթեր, որոնցում երբևէ ներդրումներ եք կատարել.**

☐ բաժնետոմսեր և բաժնային այլ արժեթղթեր
☐ պետական, մունիցիպալ և կորպորատիվ պարտատոմսեր
☐ ներդրումային հիմնադրամների փայեր
☐ մուրհակներ
☐ ածանցյալ արժեթղթեր
☐ այլ արժեթղթեր

այլ արժեթղթեր

3. Որքան է կազմել նախորդ տարվա վերջի դրությամբ Ձեր ակտիվների հաշվեկշռային արժեքը.

☐ Մինչև 500 մլն ՀՀ դրամ
☐ 500 մլն ՀՀ դրամ և ավել
☐ Այլ

4. Նախորդ տարվա վերջի դրությամբ գործունեությունից ստացված իրացման շրջանառությունը.

☐

☐ Չի գերազանցում 1 մլրդ ՀՀ դրամը
☐ 1 մլրդ ՀՀ դրամից ավել
☐ Այլ

5. Նախորդ ամսվա վերջի դրությամբ Ձեր ընդհանուր կապիտալը.

☐ Մինչև 50 մլն ՀՀ դրամ է
☐ 50 մլն ՀՀ դրամ և ավելի է

6. **Ձեր արժեթղթերի փաթեթի մեծությունը.**

☐ Չունեմ որևէ արժեթուղթ
☐ Մինչև 100 մլն ՀՀ դրամ
☐ 100 մլն ՀՀ դրամ և ավել

7. **Վերջին 4 եռամսյակում արժեթղթերի շուկայում իրականացված գործարքների քանակը՝ միջին եռամսյակային կտրվածքով.**

☐ Գործարք չի իրականացվել
☐ Մինչև 10 գործարք
☐ 10 և ավել գործարքներ

8. **Վերջին 4 եռամսյակում արժեթղթերի շուկայում իրականացված մեկ գործարքի միջին հաշվով.**

☐ Մինչև 1,000,000 ՀՀ դրամ
☐ 1-5 մլն ՀՀ դրամ
☐ 5 մլն ՀՀ դրամից ավել

9. **Քանի տարվա մասնագիտական փորձ ունեք ֆինանսական շուկայում.**

- Մասնագիտական փորձ չունեմ
- Մինչև 2 տարի
- 2 տարի և ավել

10. **0-10 բալանոց սանդղակով ինչպե՞ս եք գնահատում Ձեր փորձը ներդրումային ծառայությունների ոլորտում, որտեղ 0-ն փորձի բացակայությունն է, իսկ 10-ը՝ հարուստ փորձը:**

- 3-րդ, 4-րդ, 5-րդ հարցերից առնվազն երկուսին 2-ին 2-րդ պատասխանը նշելու դեպքում, հաճախորդը դասարակվում է պրոֆեսիոնալ համաձայն Կանոնակարգ 4/07-ի

** 6-րդ, 7-րդ, 8-րդ հարցերից առնվազն երկուսին 2-ին 3-րդ պատասխանը նշելու դեպքում, հաճախորդը կարող է դասակարգվել պրոֆեսիոնալ համաձայն սույն ընթացակարգի 2.3 կետի

_____ _____

(ստորագրություն)

Հավելված 2

Արժեթղթերի գնման/վաճառքի

Պատվեր N_____

Հաճախորդի հետ կնքված պայմանագրի համարը և ամսաթիվը _____

Հաճախորդի դեպո հաշվի համարը՝ _____

Հաճախորդի դրամային հաշվի համարը՝ _____

N	Թողարկողի անվանումը	Արժեթղթերի դասը	Գործարքի կնքման վայրը	Գործարքի տեսակը (առք/վաճառք)	Պատվերի տրման ժամանակը	Պատվերի տեսակը	Գինը	Քանակը	Ընդհանուր ծավալը	Հատուկ ցուցումներ

Հաճախորդ_____ Պատվերն ընդունեցի _____
(ստորագրություն) (ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 2*

Արժեթղթերի գնման/վաճառքի

Պատվեր N_____

Հաճախորդի հետ կնքված պայմանագրի համարը և ամսաթիվը _____

Հաճախորդի դեպո հաշվի համարը՝ _____

Հաճախորդի դրամային հաշվի համարը՝ _____

N	Ֆյուչերսի կամ օպցիոնի անվանումը /ըստ առևտրի կազմակերպչի/	Ժամկետային գործարքի տեսակը /ֆյուչերս, օպցիոն/	Գործարքի կնքման վայրը	Գործարքի տեսակը (առք/վաճառք)	Պատվերի տրման ժամանակը	Պատվերի տեսակը	Ֆյուչերսի մեկ լոտի գինը /օպցիոնի պարգևավճարի չափը/	Ֆյուչերսի/օպցիոն լոտերի քանակ

Հաճախորդ_____ Պատվերն ընդունեցի _____
(ստորագրություն) (ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 2-1

Արժեթղթերի գնման/վաճառքի

Պատվերների հավաքական ամփոփագիր առ --/--/20--

Հաճախորդի հետ կնքված պայմանագրի համարը և ամսաթիվը _____

Հաճախորդի դեպո հաշվի համարը՝ _____

Հաճախորդի դրամային հաշվի համարը՝ _____

Պատվերի համարը	Թողարկողի անվանումը	Արժեթղթերի դասը	Գործարքի կնքման վայրը	Գործարքի տեսակը (առք/վաճառք)	Պատվերի տրման ժամանակը	Պատվերի տեսակը	Գինը	Քանակը	Ընդհանուր ծավալը

Բրոքեր՝ _____
Ստորաբաժանման ղեկավար՝ _____ (ստորագրություն)

(ստորագրություն)

(ստորագրություն) (ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 2-1*

Արժեթղթերի գնման/վաճառքի

Պատվերների հավաքական ամփոփագիր առ --/--/20--

Հաճախորդի հետ կնքված պայմանագրի համարը և ամսաթիվը _____

Հաճախորդի դեպո հաշվի համարը՝ _____

Հաճախորդի դրամային հաշվի համարը՝ _____

Պատվերի համարը	Ֆյուչերսի կամ օպցիոնի անվանումը /ըստ առևտի կազմակերպչի/	Ժամկետային գործարքի տեսակը /ֆյուչերս, օպցիոն/	Գործարքի կնքման վայրը	Գործարքի տեսակը (առք/վաճառք)	Պատվերի տրման ժամանակը	Պատվերի տեսակը	Ֆյուչերսի մեկ լոտի գինը /օպցիոնի պարգևավճարի չափը/	Ֆյուչերսի/ օպցիոնի լոտերի քանակը	Ընդհանուր ծավալը	Երաշխիքային գումար	Հատուկ ցուցումներ

Բրոքեր՝ _____

Ստորաբաժանման ղեկավար՝ _____ (ստորագրություն)

(ստորագրություն)

Հավելված 2-2

Արժեթղթերի գնման/վաճառքի

(հետ կանչման, փոփոխություն կատարելու)

Պատվեր N_____

Հաճախորդի հետ կնքված պայմանագրի համարը և ամսաթիվը _____

Հաճախորդի դեպո հաշվի համարը՝ _____

Հաճախորդի դրամային հաշվի համարը՝ _____

N	Թողարկողի անվանումը	Արժեթղթերի դասը	Գործարքի կնքման վայրը	Գործարքի տեսակը (առք/վաճառք)	Պատվերի տրման ժամանակը	Պատվերի տեսակը	Գինը	Քանակը	Ընդհանուր ծավալը	Հատուկ ցուցումներ

Միաժամանակ չեղյալ համարել իմ կողմից --/--/----/ ներկայացված թիվ -- Արժեթղթերի գնման/վաճառքի պատվերը:

Հաճախորդ_____ Պատվերն ընդունեցի _____
(ստորագրություն) (ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 2-2*

Արժեթղթերի գնման/վաճառքի

(հետ կանչման, փոփոխություն կատարելու)

Պատվեր N_____

Հաճախորդի հետ կնքված պայմանագրի համարը և ամսաթիվը _____

Հաճախորդի դեպո հաշվի համարը՝ _____

Հաճախորդի դրամային հաշվի համարը՝ _____

N	Ֆյուչերսի կամ օպցիոնի անվանումը /ըստ առևտի կազմակերպչի/	Ժամկետային գործարքի տեսակը /ֆյուչերս, օպցիոն/	Գործարքի կնքման վայրը	Գործարքի տեսակը (առք/վաճառք)	Պատվերի տրման ժամանակը	Պատվերի տեսակը	Ֆյուչերսի մեկ լոտի գինը /օպցիոնի պարգևավճարի չափը/	Ֆյուչերսի/ օպցիոնի լոտերի քանակը	Ընդհանուր ծավալը	Օպցիոնի կատարման գինը

Միաժամանակ չեղյալ համարել իմ կողմից --/--/----/ ներկայացված թիվ -- Արժեթղթերի գնման/վաճառքի պատվերը:

Հաճախորդ_____ Պատվերն ընդունեցի _____
(ստորագրություն) (ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 2-3

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
Հաճախորդների սպասարկման դեպարտամենտի
տնօրեն պրն՝

Դիմում

Խնդրում եմ չեղյալ համարել իմ կողմից /--/--/----/ ներկայացված թիվ /----/--/---/----/ Արժեթղթերի գնման/վաճառքի պատվերը:

Դիմող՝
(ստորագրություն)

/--/--/----/

Հավելված 3

Գործարքի վավերագիր N_____

Վավերագրի լրացման ժամանակը
(օր/ամիս/տարի/ժամ/րոպե)_____

Արժեթղթերի գնման/վաճառքի պատվեր N_____

N	Թողարկողի անվանումը	Արժեթղթի դասը	Գործարքի կնքման օրը և ժամը	Գործարքի կնքման վայրը	Գործարքի տեսակը (առք/վաճառք)	Արժույթ	Գնված կամ վաճառված արժեթղթերի քանակը և գինը		Ընդհանուր ծավալը	Հանդիպակաց կողմի անվանումը կամ գործարքի համար հիմք հանդիսացած փաստաթղթի համարը և անվանումը	Գործարքի վերջնահաշվարկի պայմանները
							քանակը	մեկ արժեթղթի գինը			

Բրոքեր՝ _____
Ստորաբաժանման ղեկավար՝ _____ (ստորագրություն)
(ստորագրություն)

Հավելված 4

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Պատվերով գործարքի կնքման վերաբերյալ

_____ ___/_____/_____
□ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ□ փակ բաժնետիրական ընկերություն օր/ամիս/տարի

N	Պատվերի համարը և տրման ժամանակը	Պատվերի տեսակը	Գործարքի կնքման ժամանակը	Գործարքի կնքման վայրը	Թողարկողի անվանումը, արժեթղթերի տեսակը և տարբերակիչ ծածկագիրը	Գործարքի տեսակը (Առք/Վաճառք)	Գործարքի առարկա հանդիս ացող արժեթղթերի քանակը	Արժույթը	Մեկ արժեթղթի գինը	Գործարքի ընդհանուր գումարը	Գանձվող միջնորդավճարի մեծությունը	Գործարքի կատարման (վերջնահաշվարկի) պայմանները

Գործադիր տնօրեն՝ _____ (անուն, ազգանուն)
(ստորագրություն)

Կ.Տ.

□_____□ □_____□ ____ թ.

Հավելված 4*

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Պատվերով գործարքի կնքման վերաբերյալ

___/_____/_____
_____ օր/ամիս/տարի
□ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ□ փակ բաժնետիրական ընկերություն

N	Գործարքի տեսակը (առք, վաճառք)	Ածանցյալ գործիքի տեսակը /Ֆյուչերս/Օպցիոն/	Գործիքի կոդը	Լոտերի քանակը	Մեկ լոտի/միավոր կոմիսիայի գինը	Գործարքի ընդհանուր գումարը	Գործարքի կնքման ամսաթիվը (օրը/ամիսը/տարին)	Գանձվող միջնորդավճարի մեծությունը	Գործարքի կատարման (վերջնահաշվարկի) պայմանները

Հավելված 5

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Պատվերով կատարված գործարքների վերաբերյալ

___/_____/_____
հաշվետու
ժամանակաշրջանի սկիզբը
(օր/ամիս/տարի)
____/_____/_____
հաշվետու
ժամանակաշրջանի վերջը
(օր/ամիս/տարի)

_____
□ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ□ փակ բաժնետիրական ընկերություն

N	Գործարքի տեսակը (առք, վաճառք)	Թողարկողի անվանումը	Արժեթղթերի դասը	Գործարքի առարկա հանդիսացած արժեթղթերի քանակը	Մեկ արժեթղթի գինը	Գործարքի ընդհանուր գումարը	Գործարքի կնքման ամսաթիվը (օրը/ամիսը/տարին)	Գանձվող միջնորդավճարի մեծությունը	Գործարքի կատարման (վերջնահաշվարկի) պայմանները

Գործադիր տնօրեն՝ _____ (անուն, ազգանուն)
(ստորագրություն)

H.S.

□_____□ □_____□ ___ թ.

Հավելված 6

Օպցիոնի մարման դիմում

Բրոքերային ծառայությունների մատուցման

պայմանագիր թիվ------

Օպցիոնի բնութագրի և Բրոքերային ծառայությունների մատուցման կանոնների դրույթների համաձայն խնդրում եմ իրականացնել իմ ---- հաշվին հաշվառվող ---- Օպցիոնը:

Մարման օր*	Մարման ժամ ցերեկային/երեկոյան քլիրինգ	Օպցիոնի հիմնական տվյալները/առնտրայի կոդ	Քանակ	Տեսակ **PUT/CALL**	Իրականացման գին

* – Հաճախորդի կողմից Բանկ ներկայացված Օպցիոնի իրականացման Պատվերի առևտրային համակարգ մուտքագրման օր.

Հաճախորդ

--/--/----/

Կ.Տ. /Իրավաբանական անձանց համար/

Հավելված 7

Դիմում
Բանկի համապատասխան իրավական ակտերին միանալու վերաբերյալ՝

- ❑ **Բրոքերային ծառայությունների մատուցման պայմանագրին (Հավելվածներին)**
- ❑ **Պահառության ծառայությունների մատուցման պայմանագրին**
- ❑ **ՀՀ համապատասխան իրավական ակտերով սահմանված կարգով ուժի մեջ մտած՝ Բանկի կողմից մատուցվող Բրոքերային ծառայությունները կարգավորող համապատասխան ակտերում կատարված փոփոխություններին և լրացումներին**

,__ե _____20___ թ.

Սույնով _____

(ԱԱՀ/իրավաբանական անձի անվանումը)

_____(այսուհետ՝ Հաճախորդ)

(անձնագրի տվյալներ/իրավաբանական անձի տվյալները)

– հաստատում է իր համաձայնությունը Բանկի կողմից մատուցվող բրոքերային ծառայությունների մատուցումը կարգավորող Կանոններին, Պայմանագրին և այլ ակտերին միանալու վերաբերյալ և պարտավորվում է պահպանել վերջիններիս պայմաններն ու դրույթները, ներառյալ ՀՀ համապատասխան իրավական ակտերով սահմանված կարգով ուժի մեջ մտած փոփոխություններն ու լրացումները:

– հաստատում է իր համաձայնությունը Բանկի Պահառության ծառայությունների մատուցման պայմանագրին միանալու վերաբերյալ և պարտավորվում է պահպանել վերջիններիս պայմաններն ու դրույթները, ներառյալ ՀՀ համապատասխան իրավական ակտերով սահմանված կարգով ուժի մեջ մտած փոփոխություններն ու լրացումները: Հաստատում է, որ տեղեկացվել է Բանկի կողմից պահառուական գործունեության՝ արժեթղթերի շուկայում մասնագիտական այլ գործունեությունների հետ համատեղման մասին.

– Առաջարկում է բացել դեպո և դրամային հաշիվներ.

Սույն փաստաթղթի ստորագրումը Հաճախորդի կողմից և տրամադրումը Բանկին նշանակում է, որ Հաճախորդը ծանոթացել է Բանկի կողմից մատուցվող բրոքերային ծառայությունների մատուցման գործընթացը կարգավորող՝ Բանկի՝ «Բրոքերային ծառայությունների մատուցման կանոններին» (այսուհետ՝ Կանոններ), «Պահառության ծառայությունների մատուցման կանոններին», «Կապի միջոցների օգտագործմամբ հաղորդագրությունների փոխանակման ընթացակարգին», ծառայությունների մատուցման սակագներին, վերոնշյալ ակտերի հավելվածներին, ինչպես նաև Բանկի այլ կանոններին ու ընթացակարգերին, որոնք տեղադրված են Բանկի ինտերնետային կայք-էջում հետևյալ հասցեներով՝ http://www.armswissbank.am, http://www.invest.armswissbank.am և պարտավորվում է պահպանել վերոնշյալ ակտերի դրույթներն ու պահանջները:

Սույն Դիմումի ստորագրումից հետո Հաճախորդը կորցնում է Կանոններին, Պայմանագրերին ծանոթացված չլինելու վերաբերյալ հղում անելու իր իրավունքը:

Սույնով խնդրում եմ հնարավորություն ընձեռել կնքել գործարքներ հետևյալ շուկաներում՝

- Դասական արժեթղթերի շուկա (բաժնետոմսեր, դեպոզիտար ստացականներ և այլն)
- Ածանցյալ ֆինանսական գործիքների շուկա.

Հաճախորդ (լիազորված անձ)

Ստորագրություն _____/_____

Կ.Տ. (իրավաբանական անձանց համար)

Լրացվում է Բանկի լիազորված աշխատակցի կողմից

Պայմանագրի համար		ընդունման ամսաթիվ	
Դրամային հաշվի համար		կատարման ամսաթիվ	
Դեպո հաշվի համար		Աշխատակցի տվյալները և ստորագրությունը	